XXII

ՆՈՐ-ԴԱՐ

XXII

№ 2 Կիրակի, 28 Օգոստոսի

1883–1905

Կիրակի, 28 Օգոստոսի № 2

Բաժանորդագինը պոստի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., համարը՝ 5 կ.:
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը:
Խմբագրութեան գրասենեակը՝ Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ»,
կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով:
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար առանձին համաձայնութեամբ: Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Իրաւունքների վերականգնումը:
Հաշտութիւն-խաղաղութիւն:
Բարձրագոյն հրովարտակ:
Բարձրագոյն ուկազ կառավարիչ սենատին:
Ժամանակաւոր կանոններ:
Հայրապետական կոնդակ:
Արևան և կրակի վայրերից:
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են—Մարտիրոս գիւղից, Ալէքսանդրապոլից, Վաղարշապատից:
Մամուլի շուրջը:
Թղթակցութիւններ.— Նամակ Պարսկաստանից—Ուրմի:
Քաղաքական.—Թիւրքիա: Անգլիա և Ճապոնիա: Ռուս-Ճապոնական պատերազմը սկզբից մինչև վերջը:
Բանասիրական. — Մի գիշեր իմ կեանքից:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 27 օգոստոսի 1905 թ.

ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Հայոց ծխական դպրոցների փակման հետևեց եկեղեցական կալուածների գրաւումը:

Առաջին դէպքում մի ամբողջ ժողովրդի մայրենի լեզուն էր խափանւում, իսկ երկրորդ դէպքում՝ ազգի հաւատն էր վտանգւում:

Եթէ դպրոցների փակումը, որի սկիզբը դրուեց 80-ական թուականներին և լրացուցիչ հարուածը տրուած 1896-ին, ամբողջ ազգը շուարած դրութեան մէջ ձգեց և խորը վէրք բաց արեց հայութեան սրտի մէջ, եկեղեցական կալուածների գրաւումը, որի մասին կարգադրութիւնը տեղի ունեցաւ 1903 թ. յունիսի 12-ին, յուզեց հայութեան հոգին ու միտքը, խորապէս սուգի մէջ ձգելով Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցին:

Այդ դրութեան հետ հաշտեցնելու համար տեղական ռուս նոյնպէս և հայ թերթում լոյս տեսան կալուածների գրաւման կանոններ և իմացանք, որպէս ամենը կատարւում է ըէլլի Հայոց եկեղեցին մտածած առանձին սիրոյն և նրա պայծառութեան համար...

Բայց այդ ամենը որոշ ռեժիմի հետևանք էր, մի թիւրիմացութեան, որին շատ զոհ բերուեց:

Ժամանակը, որ ի միջի այլոց շատ վէրքեր բուժում է, պարզում է շատ թիւրիմացութիւններ, պարզեց, որ մի հաւատարիմ և խաղաղ կուլտուրական ժողովուրդ տարաբախտաբար կորցրել է Բարձրագոյն վստահութիւնը:

Կառավարիչ սենատին օգոստոսի 1-ին ուղղած Բարձրագոյն Ուկազով վերականգնւում են Հայոց ազգի անկապտելի իրաւունքները: Եկեղեցական կալուածները և նրանց կառավարութիւնը վերադարձնւում են հայոց Եկեղեցուն, և որովհետև հայոց ծխական դպրոցները հայոց եկեղեցու գաւիթներն են, եթէ եկեղեցին մայր է, դպրոցներն էլ Եկեղեցու զաւակներն են, բնական է, որ խափանուած իրաւունքների վերականգնումը լրիւ անելու համար, պէտք է որ ազատուած մօրը վերադարձնուէր և նրա մէն ու ճար զաւակը:

Որքան ուրախութիւն պիտի կարողանայինք յայտնել, որքան բան ունէինք ասելու „Նոր-Դար“-ը, քանի որ Եկեղեցին սուգ մտնելուց յետոյ ինքն էլ պապանձուեց և Յովէի համբերութեամբ ու Քրիստոսի քարոզած, յուսով սպասեց մինչև որ վերջապէս Հայաստանեայց սուրբ վերադարձման հետ բացւում են այժմըս և նրա լեզուի կապանքները:

Դժբաղդաբար, այսօր անկարող ենք շարունակելու մեր խօսքն այդ մասին, որովհետև մեր սիրտը դառնութեամբ լցուած է այն ամենով, ինչ որ կատարւում է մեր շուրջը. հայութիւնը արնոտած՝ ինքնապաշտպանութեան կռիւ է մղում թաթար-թուրք ամբոխի դէմ, որ նենգ և խարդախ մարդկանց թելադրութեամբ աւերում է՝ ինչ որ հայինն է, սպանում նրան՝ ով որ հայի պատկեր է կրում:

Այնուամենայնիւ ուզում ենք ձայնակցել Կովկասի հայ ժողովրդի Նորին Մեծութեան տեղակալ գրաֆ Վարոնցով Դաշկովին տրած համակրութեան և սրտանց շնորհակալութեան արտայայտութիւններին՝ Հայոց ժողովրդի խափանուած իրաւունքների վերականգնման գործին նրա բարի միջամտութեան համար:

Այդ դէպքում գրաֆ Վարոնցով Դաշկովը հանդիսացաւ ժողովրդի իրաւունքների պաշտպան: Արդարև իշխանաւորի համար ինչ կայ աւելի մեծ երջանկութիւն, քան այն գիտակցութիւնը, թէ ունի զօրութիւն և կարող է բարին գործել և գործում է բարին, կարող է արդարադատ լինել, մարդկանց հանել թշուառութիւնից և այդ անում է նա. ատելութեան փոխարէն սէր է տարածում և այդ սիրով նա շրջապատուած և տարուած գործում է երկրի բարօրութեան համար: Ծերերից, հոգևորականներից օրհնութիւնը, ժողովրդից երախտագիտական զգացումները և երիտասարդ սրտերի սրտագին համակրութիւնների արտայայտութիւններն ուղեկցում են արդարադատ և բարի իշխանաւորին իւր ամենօրեայ կեանքի և պաշտօնավարութեան ընթացքում:

Այսպիսի իշխանաւոր է մեզ համար այսօր Նորին Մեծութեան Տեղակալ Կովկասում՝ գրաֆ Վարոնցով Դաշկովը:

Շատ տանջուեցանք, շատ ատեցինք, այժմ շատ սիրում ենք:

Եկեղեցական կալուածների և դպրոցների իրաւունքների վերականգնումից դուրս մենք ունենք ուրիշ շատ ցաւեր, որոնց պէտք է դարմանել, ուրիշ շատ խնդիրներ, որոնք սպասում են արդար լուծման, շատ թիւրիմացութիւններ՝ պարզելու:

Մեր ցաւերի դարմանը, մեր արդար պահանջների գոհացումը սպասում ենք լի հաւատով մեր իշխանաւորից:

Սոյն համարը նոյնպէս յայտարարութեան փոխարէն լոյս հանելով, որա մէջ պակասում են հեռագիրները, ինչպէս և քաղաքական մեծ թերթերի սովորական մի քանի բաժինները: Այդպէս էլ պէտք է լինի, քանի որ թերթը պարբերաբար լոյս չէ տեսնում: Սեպտեմբերից, երբ «Նոր-Դար»-ը լոյս կը տեսնի կանոնաւոր և պարբերաբար, կը լինեն հեռագրներ, թղթակցութիւններ և այն ամենը, ինչ որ պահանջւում է մի քաղաքական-գրական պարբերական հրատարակութիւնից:

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ – ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Պորտսմուտում հաշտութեան բանակցութիւնն ընդհատուելու վրայ էր, հակառակ Ռուզվելտի բոլոր ջանքերի, պատերազմող պետութիւնների ներկայացուցիչները մօտենալու փոխարէն հեռանում էին միմեանցից, բանակցութիւնը այն աստիճան սուր կերպարանք ստացաւ, որ Վիտտէն և թէ Կամուրան պատրաստւում էին վերադառնալ հայրենիք, թողնելով վերջին խօսքը Օյամային և Լինևիչին:

Սոսկալի պատերազմի ներկայացումը պիտի վերսկսուէր, և մօտով ունեցող այդ ներկայացման հանդիսատես մարդկութեան լարուած հիւանդոտ ջիղերը ճաշակում էին արդէն սպասած աւելի մեծ կոտորածների, արեան գետերի պատճառելիք բաղցրութիւնները, երբ դէպի Տոկիո Ռուզվելտի արած վերջին փորձը փոխեց դրութիւնը գլխովին. վարագոյրն իջաւ անսպասելի, ներկայացումն ընդհատուեց. հաշտութիւն և խաղաղութիւն: Հաշտութեան պայմանները զարմանք պատճառեցին աշխարհին, երբ ռուսաց ներկայացուցիչները զարմացան ճապոնացիների արած անըսպասելի զիջումների վրայ: Կատաբուլից շատ ամիսներ առաջ մի անգլիական թերթի ասածը, թէ յաղթող Ճապոնիան իւր պահանջների չափաւորութեամբ աշխարհը պիտի զարմացնէ:

Պորտսմուտի հաշտութիւնն առաջն առաւ այնպիսի կոտորածի, որի մօտ Լեաօեանը, Շահէն, Մուկդէնը, Ցուսիման պիտի մոռացուէին: Պորտսմուտի հաշտութիւնով ազատուեցան չարաչար մահից և թշուառութիւնից հարիւր հազարաւոր մարդիկ, իսկ սովից միլիոնաւոր բնտանիքներ, էլ չյիշենք նիւթական, տնտեսական այն ահագին վնասը, որ պիտի ծանրանար տասնևութն ամիս անյաջող պատերազմի հարուածների տակ տարուբերուող Ռուսիայի վրայ:

Անբաղդ պատերազմի ընթացքում յաջող հանգամանքը միայն այն եղաւ, որ հաշտութեան բանակցութեան տեղը որոշուեց Ամերիկան և ոչ Ֆրանսիան, ինչպէս այդ ցանկանում էր ռուսաց դիպլոմատիան: Կարելի է ասել նախախնամութեան տնօրինութիւնն էր այդ, ինչպէս և այն հանգամանքը, որ ռուսաց կողմից իբրև ներկայացուցիչ վերջին րոպէին Վիտտէն հանդէս եկաւ և ոչ մի ուրիշը:

Ռուզվելտը իւր հեղինակութեամբ՝ իւր շնորհքով կատարեց աշխարհի միջնորդի դերը—մի պաշտօն, մի դեր, որ մնացել է Բերլինի կոնգրեսից:

Խաղաղութեան բարեկամ մարդկութեան հետ երախտապարտ են Ռուզվելտին և՛ Ռուսիան և՛ Ճապոնիան: Առանց Ռուզվելտի հաւանական է, որ հաշտութիւն գլուխ չգար կամ հաշտութեան պայմաններն աւելի ևս ծանր լինէին:

Անտարակոյս, Ռուզվելտը առաջնորդուելով մարդասիրական զգացումներով և գործելով յօգուտ քաղաքակրթութեան, չէ մոռացել և այն հաշիւը, թէ Ամերիկայի համար այնքան էլ լաւ չէ, որ ռուսաց զօրութիւնը բոլորովին ոչնչանայ հեռու արևելքում, Խաղաղ ովկիանոսի ջրերում և Ամերիկան դէմ առ դէմ կանգնած լինի Ճապոնիայի գերիշխանութեան առաջ. բայց այս վերջին հանգամանքը չի կարող նսեմացնել Ռուզվելտի խաղաղութեան գործին մատուցած ծառայութիւնը:

Այն միտքը, թէ յաղթող Ճապոնիան Պորտսմուտում կանաչ սեղանի վրայ պարտութիւն կրեց—մենք սխալ ենք համարում: Ճապոնիան ոչ թէ պարտութիւն է կրել, այլ յաղթութիւն, և ամբողջ պատերազմի ընթացքում տարած յաղթութիւնների շարքում Պորտսմուտի յաղթութիւնն ամենից մեծն և փառաւորն ենք համարում, որովհետև այդտեղ Ճապոնիան յաղթեց իրեն—յաղթական Ճապոնիային: Ճապոնիան զսպելով իրեն՝ իւր իմաստուն և հեռատես քաղաքականութեամբ չափաւորեց իւր պահանջները, մարդասիրութեան բարձր օրինակ տալով, և իրեն հեռու պահելով եւրոպական անյատակ ագահութիւնից, աւելի լաւ ապահովեց զէնքով ձեռք բերածը և, որ գըլխաւորն է, գրաւեց և ռուսների սիրտն այնպէս, որ հաշտութեան դաշինքը կնքուց յետոյ չի գոյանալ անհաշտութեան և հակառակութեան այն ոգին, որը մինչև օրս, 1870 թուականի պատերազմից յետոյ, ուրեմն երեսուն տարիներից ի վեր շարունակւում է, որոշ չափով, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև:

Ոչինչ էր և ոչնչացաւ Վիլհելմի յօրինած «Դեղին վտանգը»:

Եթէ Ճապոնիայի տեղում այսօր Գերմանիան, Ֆրանսիան կամ Անգլիան լինէին, դժուար թէ իբրև յաղթող այն չափաւորութիւնը և համեստութիւնը ցոյց տային, որին ականատես է այսօր աշխարհը:

Տարիներ առաջ „Նոր-Դար“-ը յայտնեց այն միտքը, թէ քսաներորդ դարը Ասիային է պատկանում, և այսօր հեռու արևելքի մօտ մօտիկ արևելքը մոռացւում է:

Ճապոնիան յիշեցրեց աշխարհին Ասիայի կատարելիք դերն ապագայում: Այսօր Եւրոպայի ուշադրութիւնը դարձրած է Ռուսիայի ներ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԳԻՇԵՐ ԻՄ ԿԵԱՆՔԻՑ

(Էտիւդ)

Նուագահանդէս էր:

Եկուոր հռչակաւոր ջութակահարի գործիքը վերջին անգամ այլերսալից հնչեց, վերջին անգամ նրա դառն ողբը, հառաչանքը և կսկիծն արձագանք գըտան դահլիճի բարձր կամարի տակ և ժողովրդի բուռն ծափահարութիւնները սթափեցրին ինձ այն կիսաքուն, թըմրած դրութիւնից, որը պաշարել էր ինձ նուագահանդիսի նոյն իսկ սկզբից, երբ մեծ դահլիճում առաջին անգամ լսուեց ջութակի մեղմ, սրտամաշ մեղեդին: Իմ գեղեցիկ ոսկի երազը կորաւ անհետացաւ...

Ես նայեցի բեմին:

Ամբոխը բարձրաձայն յայտնում էր իւր հրճուանքը, իւր երկրպագութիւնը նրան, որի առասպելական գործիքը ստիպեց ինձ մոռանալ և ժամանակը, և տեղը, մոռանալ ամբողջ իրական աշխարհը:

Իմ «ես»ը ամբողջովին սաւառնում էր մի ուրիշ աշխարհում, ուր տիրում էր գեղեցիկ հնչիւնների և մեղեդիների քաոսը: Աստուած իմ, որքա՜ն դիւթեցուցիչ տեսիլներ պատկերացան իմ առաջ այն մեղեդիների ներգործութեան տակ. մերթ ողբալի, ինչպէս ինքը դառն կսկիծը, մերթ լի սիրալիր հրճուանքով և խաղաղ անդորրութիւնով ու նիրհով, ինչպէս խաղաղ են և նիրհոտ հրաշալի արևելքի աւելի ևս հրաշալի գիշերները, և մերթ մռայլ ու խոժոռ, ինչպէս մռայլ են միջնադարեան կիսաւերած ամրոցների ահռելի փլատակները...

Իմ առաջ հերթով անցնում էին այդ հրաշալի տեսիլները, պատկերանում էին այնչափ իրական, այնչափ կենդանի, որ ես կարծես տեսնում էի նրանց, զգում էի նրանց գոյութիւնը:

Իմ հոգին, իմ սրտի ամենախոր ծալքերն ընթանում էին դէպի այդ դիւթիչ տեսիլները, ընթանում էին կատաղի, անզուսպ...

Ես ապրում էի նրանց ներքին կեանքով, նրանց զգացմունքներով:

Ես լաց էի լինում, ես ողբում էի ջութակի հնչիւնների հետ միասին. ես պաղատում էի, աղերսում էի փրկութիւն ու թողութիւն. ես շշնջում էի սիրոյ, խոստումների, կշտամբանքների և անէծքների կցկտուր խօսքերը...

Ջութակահարը վաղուց վերջացրել էր նուագելը, ամբոխը ցրուել էր, իսկ իմ ականջներում դեռ հնչում էր մեղմ, ինչպէս տանջուած հոգու աղօթք, Շոպէնի Nocturnt մեղեդին, հրճուալից ինչպէս յաղթողի ուրախ աղաղակ, Կոնտսկու մազուրկան և նոյն իսկ իւր վայրենութեամբ գեղեցիկ Կովկասի լեզգինկան..

Ես յոգնած էի զգում ինձ, ծանրաբեռնուած այդ հնչիւնների և մեղեդիների քաոսից:

Սուրբ աղօթքը, անձայն մրմունջը փոխւում էր կատաղի անէծքի, անզուսպ, կրակոտ սէրը աղերսանքի, և այդ շարունակական ելևէջները, այդ փոփոխութիւնները մաշեցին իսպառ իմ հոգին:

Ես անհաստատ քայլերով, երերալով դիմեցի գլխաւոր մուտքին և մեքենայաբար վերցնելով ծառայի ձեռից վերարկուս, գլխարկս ու ձեռնափայտս, դուրս եկայ փողոց:

—

Աշնանային գիշերը սքանչելի էր: Անամպ երկնակամարում դանդաղ լողում էր լուսնեակը և նրա մեղմ, սպիտակին տուող լոյսը, ընկնելով սալայատակի սրուած քարերի, տների պատերի և քնած ծառերի անշարժ տերևների վրայ, ամեն ինչ լուսաւորում էր երերուն, արծաթափայլ շերտերով:

Քաղաքը քնած էր և գիշերային լռութեան մէջ երբեմն երբեմն տարածւում էին խուլ, անորոշ ձայներ: Զով քամին փչեց երեսիս և մի քիչ հանդըստացրեց իմ գրգռուած ջղերս:

Ես շտապով շարունակեցի ուղիս: Մեղեդիների, հնչիւնների և երգերի քաոսը դեռ հնչում էր ականջումս: Ես չէի կարող ազատուել նրանցից: Նրանք հետևում էին ինձ, նրանք խրուել էին ուղեղիս ամենահեռաւոր ծալքերի մէջ և անդադար հնչում էին, հնչում էին հակառակ իմ կամքի, ինչպէս քամուց հնչում է էօլի տաւիղը:

Չգիտեմ ինչու, այդ հնչիւնները յիշեցրին ինձ իմ հեռաւոր անցեալը, իմ կեանքի ամենալաւ օրերը, իմ անցեալի վաղուց փշրուած իդէալները, իմ ձգտումները դէպի բարին, դէպի կատարելագործութիւն, ձգտումներ, յաւիտեան թաղուած կեանքի ալեկոծ ծովի մութ խորքում: Այո, այն ժամանակ, այն անցած գնացած օրերում կար ինձանում և սէր, և յոյս, և հաւատ.

Այն ժամանակ ես հաւատում էի, որ մարդիկ եղբայր են, որ երկրիս վրայ գոյութիւն ունի բարիք: Հաւատում էի, որ բարին միշտ յաղթում է չարին և լուսափայլ արշալոյսը կփոխարինէ մութ, մռայլ գիշերին: Մի ակնթարթում ամբողջ իմ անցեալը պատկերացաւ առաջս իւր բոլոր մանրամասն բովանդակութեամբ:

Ես զգացի ինձանում մի նոր, անծանօթ դող և անդորրութիւնը, պարզ մանկական հրճուանքը տիրեց ինձ: Ես կարծես կրկին դարձայ երիտասարդ, կարծեցի թէ ձգեցի վրայիցս անցած գնացած օրերի, տանջանքների և անվերջ հիասթափութեան ծանր ու դառն բեռը:

Երկնային հնչիւնները կրկին կենդանացրին իմ կորուսած իդէալները, իղձերը, յոյսերը, և իմ սրտի, իմ հոգու ամեն մի լարը դողաց բերկրալից հրճուանքից:

Այո, այդ րոպէին ես ուրախացայ իմ վերածնութեանը, իմ յետ դարձած անցեալին, ուրախացայ, ինչպէս ուրախանում է խեղճ բանտարկեալը, տասնեակ տարիներ հալ ու մաշ եղած մութ բանտի խոնաւ որջերում իւր ազատութեան, ինչպէս ուրախանում է իւր հայրենիքից անջատուած պանդուխտը, երբ նա կրկին տեսնում է հայրենի հողը, իւր ընտանիքը: Այդ հնչիւններն ապացուցեցին ինձ, որ դեռ մեռած չէ բոլորովին ինձանում այն հեռաւոր, անորոշ, իբրև երազ, անցեալը, երբ ես տեսնում էի, զգում էի կեանքի նպատակը և կեանքի միտքը, նրա ներքին բովանդակութիւնը, երբ շատ հեշտ, առանց տարակուսանքի որոշում էի չարն ու բարին, գեղեցիկը և վեհը վատից, ստորից, կեղտից, երբ անբիծ խիղճս ապստամբում էր որևէ բռնութեան, ստի, խաբէութեան և չարիքի դէմ և հոգիս, ամբողջ իմ «ես»ը անզուսպ սլանում էր դէպի սուրբ երիտասարդութեան սուրբ իդէալները: Կեանքի ուղին, թւում էր ինձ այն ժամանակ, զարդարուած է վարդերով և ես հըպարտ և ազատ դիմում էի առաջ և առաջ...

Բայց անցան տարիներ, երկար տարիներ: Անցան անդարձ, մռայլ, տաղտկալի: Իմ պատանեկական ոսկի խաբուսիկ երազներս անհետացան իբրև ծուխ կեանքի մթնոլորտում:

Կեանքի բաժակն ես արդէն ըմպել էի և նրա տակը ես գտայ աղ ու դառնութիւն միայն. գեղեցիկ, հոտաւէտ վարդերը թառամեցին. մնացին միայն փշերը և տատասկը...

Իմ կեանքի լուսատու աստղը մթնեց, գլորուեց:

Մտածին կեանքս դարձաւ մի ողբալի, աննպատակ կեցութիւն օրէցօր, տարէցտարի. կեանքի սառնամանիքը սպանեց իւր մահաբեր սառն շնչով իմ յոյսերը, իմ հաւատը, իմ սէրը:

Այդ անակնկալ ցուրտը կաշկանդեց ինձ, իմ կենսական ոյժերը և ես, իբրև դիակ, գլորւում էի օրէցօր աւելի և աւելի ցած, ընկնում էի մռայլ անդունդը:

Իմ մտքերը, կարծիքները, համոզմունքները, ամեն ինչ խառն ու շփոթ էին. բարին դարձաւ չար, իսկ չարը—բարի. խղճիս խայթոցները, խղճիս երբեմն զօրեղ ձայնը լռեց, մարեց:

Սուտը, խաբէութիւնը, բռնութիւնը, մեղքը այլևս չէին տակն ու վրայ անում կոչտացած, կեանքի ցեխով ծածկուած հոգիս և սիրտս:

Ամեն մի տգեղ երևոյթի վրայ ես նայում էի սառնասիրտ կերպով:

Մարդիկ, որոնց ես առաջ անուանում էի «եղբայրներ», դարձան ինձ համար թշնամիներ, անխիղճ, վայրենի հակումներով էակներ:

Նոյն իսկ կեանքը, չգիտեմ ինչու համար, սկսեցի ես անուանել «կռիւ ապրուստի համար» և ոչ թէ գոյութեան համերաշխութիւն:

Եւ յանկարծ ջութակի հնչիւնները, այդ երկնային մեղեդին, յիշեցրին ինձ իմ անցեալը, ստիպեցին կրկին զգալ այդ գեղեցիկ, անցած գնացած օրերը... Մնացել էր ուրեմն սրտումս, նրա ամենահեռաւոր, ամենախոր ծալքերում մի անբիծ, մի մաքուր անկիւն, յստակ, իբրև սրբութիւն սրբոց, ուր ճանապարհ գտան, անցան այդ հնչիւնները և շըշնջացին հաւատի, յոյսի և սիրոյ վեհ խօսքերը:

Հասարակ փայտի կտորը, մի ջութակ բանքարաւոր արտիստի ձեռքում ստիպեց ինձ ապրել գոնէ մի քանի րոպէ հեռու, լուսաւոր անցեալի գեղեցիկ կեանքով:

—

Գրասեղանիս վրայ զետեղուած լապտերը հանգչելու վրայ էր. Նրա աղօտ, երերուն լոյսը լուսաւորում էր միայն սեղանի կանաչ մահուդը, դէս ու դէն ձգած գրքերը, լուսանկարները, հազիւ հազ հասնում էր առաստաղին և մթութեան մէջ էր թողնում սենեակիս անկիւնները:

Ես անշարժ նստած էի գրասեղանիս առաջ և մտածում էի:

Բայց ոչ, դա մի շարունակական լոգիկական մտածութիւն չէր. դա մտքերի խառն ու շփոթ այն հոսանքն էր, երբ փաստերը, վաղանցիկ տպաւորութիւնները ծնւում են մի ակնթարթում մարդու ուղեղի մէջ և իսկոյն փոխւում են նոր մտքերի, նոր տպաւորութիւնների, կրկին երևան գալիս, կրկին անհետանում..

Ակամայ համեմատում էի իմ անցեալը ներկայիս հետ և խիղճս աւելի և աւելի բարձրաձայն բողոքում էր վերջինի դէմ: Ես աշխատում էի գտնել արդարացուցիչ պայմաններ, հանգամանքներ, ապացուցանել, որ բարոյական անկումս հետևանք է, և բնական հետևանք, իրական կեանքի հոսանքի ու պահանջների և...ի զուր: Ես անզօր էի. խղճիս խայթը տանջում էր ինձ:

—Դու կարող էիր լինել մի ուրիշ մարդ... մեղքը քոնն է,—անդադար շշնջում էր մէկը ականջիս:

Եւ ես կրկին տառապում էի, կրկին տանջւում հոգեպէս:

Ես զգում էի մարմնիս մէջ մի սարսուռ, մինչդեռ գլուխս այրւում էր տաքութիւնից և շրթունքներս չորացել էին:

Ես վերկացայ տեղիցս և սկսեցի չափել սենեակս:

Մութը դարձել էր աւելի թանձր և լապտերի հազիւ պլպլող լոյսն ընկնում էր միայն սեղանիս վրայ մի աղօտ շրջանակով:

Ես յոգնած ընկայ բազկաթոռիս մէջ

քին կեանքի վրայ, Ռուսիայի, որ Ասիայի նախադուռն է. վաղը Չինաստանը կը գրաւէ ընդհանուրի ուշադրութիւնը։ Ճապոնիան, չը մոռանանք, ծագող արեգակի երկիրն է։

Ex orienta lux

Ս. Ս.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ համայն Ռուսիոյ, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլեանդիայի և այլն և այլն և այլն։

Յայտարարում ենք մեր բոլոր հաւատարիմ հպատակներին.

Ռուսաց պետութիւնը ստեղծուել է Ցարի ու ժողովրդի և ժողովրդի ու Ցարի անքակտելի ամուր միութեամբ։ Ցարի և ժողովրդի համաձայնութիւնն ու միութիւնը բարոյական այն մեծ զօրութիւնն է, որից ստեղծուել է Ռուսիան դարերի ընթացքում, պաշտպանել է նրան ամեն տեսակ աղէտներից ու պատահարներից և Ցարը հանդիսանում է իբրև գրաւական նրա միութեան, անկախութեան և ամբողջութեան, նիւթական բարօրութեան և հոգեկան զարգացման ներկայում և ապագայում։

1903 թուի փետրուարի 26-ին տրուած հրովարտակով հայրենիքի բոլոր հաւատարիմ զաւակներին կոչում էինք սերտօրէն միանալ կատարելագործելու համար պետական կարգը, ամուր կազմ սահմանելով տեղական կեանքի մէջ, և այն ժամանակ մեր մտահոգութիւնն այն էր, որ ընտրողական հասարակական հաստատութիւնները համաձայնեցնենք կառավարչական իշխանութիւնների հետ և արմատախիլ անենք նրանց միջև եղած պառակտումը, որն այնքան կործանարար ազդեցութիւն ունի պետական կեանքի կանոնաւոր ընթացքի վրայ։ Այս մասին չեն դադարել մտածել Ինքնակալ Ցարերը, Մեր Նախորդները։

Այժմս հասել է ժամանակը, հետևելով Նրանց բարի ձեռնարկութիւններին, ընտրովի մարդիկ կանչելու ամբողջ Ռուսական Երկրից, որ մշտնջենապէս և գործնականապէս մասնակցեն օէնքների կազմութեան, այս բանի համար միացնելով պետական բարձր հաստատութիւնների կազմի մէջ մի առանձին օրէնսխորհրդակցական հաստատութիւն, որին իրաւունք է տրւում մշակելու և քննելու օրինագծերը և քննելու պետական ելևմտացոյցերը։

Այս նկատումներով, անխախտ պահպանելով Ռուսական Կայսրութեան հիմնական օրէնքը Ինքնակալ իշխանութեան էութեան մասին, մենք բարւոք համարեցինք հիմնել պետական դումա և կանոնադրութիւն հաստատեցինք դումայի ընտրութիւններին վերաբերեալ, տարածելով սոյն օրէնքների զօրութիւնը ամբողջ կայսրութեան վրայ, այն փոփոխութիւններով միայն, որոնք հարկաւոր կը դատուեն առանձին պայմանների մէջ գտնուող նրա մի քանի ծայրերի համար։

Ֆինլեանդիայի Մեծ Իշխանութեան ընտրեալների պետական դումայում ունենալիք մասնակցութեան կարգի մասին, կայսրութեան համար ընդհանուր և դոյն երկրի օրէնսդրութեանց խնդիրների վերաբերմամբ, Մենք ցուցումներ կը տանք առանձին։

Ընդ սմին Մենք հրամայեցինք ներքին գործերի մինիստրին անյապաղ կանոններ ներկայացնել Մեզ ի հաստատութիւն պետական դումայի ընտրութիւնների կանոնադրութիւնը գործադրելու մասին այնպէս, որ 50 նահանգներից և Դոնի Զօրքի շրջանից ընտրուած անդամները կարող լինին դումա գալ 1906 թուի յունուարի կէսից ոչ ուշ։

Մենք Մեզ ենք վերապահում ամբողջովին պետական դումայի հաստատութեան յետագայ կատարելագործութեան հոգացողութիւնը, և երբ կեանքն ինքը ցոյց կը տայ նրա հաստատութեան մէջ այն փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը, որոնք կարող են կատարելապէս գոհացում տալ ժամանակի պահանջներին և պետական բարօրութեան, չենք յապաղիլ այս մասին պատշաճաւոր ցուցումները տալ իւր ժամանակին։

Վստահութիւն ենք տածում, որ ամբողջ բնակչութեան վստահութեամբ ընտրուած մարդիկ, որոնք այժմ կանչւում են մասնակցելու կառավարութեան հետ միասին օրէնսդրական աշխատանքին, ցոյց կըտան ամբողջ Ռուսիայի առաջ, որ իրենք արժանի են Ցարի այն վստահութեան, որով նրանք կանչւում են սոյն մեծ գործին մասնակցելու, և կատարելապէս համերաշխ միւս հաստատութիւնների և Մեզնից նշանակուած իշխանութիւնների հետ, օգտակար աջակցութիւն ցոյց կը տան Մեզ ի բարօրութիւն մեր ընդհանուր Մայր-Ռուսիայի հաստատելու պետութեան միութիւնը, ապահովութիւնն ու վեհութիւնը և ժողովրդական կարգն ու բարօրութիւնը։

Աստուծոյ օրհնութիւնը հայցելով Մեր ձեռքով հիմնուող պետական հաստատութեան աշխատանքների վրայ, Մենք, անսասան հաւատով առ ողորմածութիւնն Աստուծոյ և առ պատմական այն անշեղ վիճակը, որ որոշել է Աստուածային Նախախնամութիւնը Մեր թանկագին Հայրենիքի համար, հաստատապէս ապաւինում ենք, որ Ամենակարող Աստուծոյ օգնութեամբ և իւր բոլոր զաւակների միահամուռ ջանքերով Ռուսիան դուրս կը գայ յաղթական ներկայումս իրեն հասած ծանր փորձանքներից և կը վերածնի իւր հազարամեայ պատմութեամբ դրոշմուած հզօրութեան, վեհութեան և փառքի մէջ։

Տրուած է Պետերհոֆում օգոստոսի վեցերորդ օրը, Քրիստոսի Ծննդեան հազար ինն հարիւր հինգերորդ, իսկ Մեր թագաւորութեան տասնևմէկերորդ տարում։

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան Սեպհական ձեռքով ստորագրուած է «ՆԻԿՈԼԱՅ»

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒԿԱԶ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՍԵՆԱՏԻՆ

Վերականգնելով Մեր փոխարքայութիւնը Կովկասում, Մենք Կովկասը կառավարելու համար Մեր վստահութեամբ ընտրուած անձի վրայ դրեցինք այդ բարեբեր երկրում հասարակական կեանքի խանգարուած ընթացքը վերականգնելու հոգացողութիւնները։ Ներկայումս փոխարքան, իրեն յանձնուած երկրի պայմաններին ծանօթանալուց յետոյ, ներկայացրել է Մեզ իւր ենթադրութիւնները փոփոխելու համար մի քանի որոշումներ, որոնք վերաբերում են բնակչութեան հայկական մասին և դժուարացնում են նրա զարգացման կանոնաւոր ու հանգիստ ընթացքը։ Բարւոք համարելով հաստատել Մեր փոխարքայի առաջադրութիւնը, Մենք ընդարձակ կրթական միջոցներ ենք շնորհում հայադաւան հոգևորականութեանը ժողովրդի օգտին գործելու համար։ Հրամայելով, ընդ սմին, ներքև յիշուած հիմունքներով վերադարձնել հայ եկեղեցական հաստատութիւններից առնուած գոյքերը, Մենք թոյլ ենք տալիս Մեր փոխարքային իւր իրաւասութեան տակ գտնուած երկրի սահմաններում այժմ իսկ գործադրել ժամանակաւորապէս, մինչև որ օրէնսդրական կարգով քննուեն, կազմուած այն կանոնները, որոնք պէտք է ապահովեն ծխականների մասնակցութեանը եկեղեցական գոյքերը կառավարելու գործում։ Իսկ որպէս զի ապագայում այլ ևս տեղի չունենան այն թիւրիմացութիւնները, որ ծագում էին գոյութիւն ունեցող օրէնսդրութեան թերութիւնից, փոխարքան պէտք է դիտողութեան առնէ կառավարչական իշխանութեան դէպի հայոց եկեղեցական հաստատութիւններն ունենալիք յարաբերութիւնները ճշտիւ որոշելու խնդիրը։ Համաձայն սրան, հրամայում ենք. 1) ի վերացումն 1903 թուի յունիսի 12-ի Բարձրագոյն հրամանի, հայադաւան եկեղեցու պատշաճաւոր հաստատութիւնների իրաւասութեանն ու կառավարութեանը յանձնել հայադաւան եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին և հոգևոր դպրոցներին պատկանող բոլոր անշարժ կալուածներն ու դրամագլուխներն իրենց բոլոր եկամուտներով, որ ստացուել են արքունական կառավարութեան ժամանակ, բացի դոյն կալուածները պահպանելու համար արուած ծախսերից, նմանապէս և այն գումարներից զատ, որ ծախսուել են այդ կալուածները յարքունիս գրաւելու համար։ Եկեղեցական հաստատութիւններին կալուածներն ու նրանց եկամուտները յանձնել Կովկասի Մեր փոխարքային, ներքին գործերի մինիստրի և հողաշինութեան ու երկրագործութեան գլխաւոր կառավարչի փոխադարձ համաձայնութեամբ. 2) այդպիսի կալուածների և դրանց եկամուտների յանձնման ժամանակ հայադաւան հոգևորականութեան արած յայտարարումների վերջնական լուծումը Կովկասեան երկրում յանձնել Կովկասի Մեր փոխարքային. 3) թողնել Մեր փոխարքային, մինչև որ նոր կանոնադրութիւն մշակուի հայոց եկեղեցական դպրոցների մասին, թոյլ տալ Կովկասեան փոխարքայութեան սահմաններում եկեղեցիներին և վանքերին կից բանալու եկեղեցականծխական դպրոցներ, 1874 թուի յուլիսի 19-ի Բարձրագոյնս հաստատուած կանոնների հիման վրայ. 4) յանձնարարել փոխարքային՝ ա) անյապաղ առաջադրութիւն անել, սահմանուած կարգով, առանց բարձր հաստատութիւնների հետհաղորդակցութիւն ունենալու, հրատարակելու նոր կանոնադրութիւն հայոց եկեղեցական դպրոցների մասին, դրա հետ կապելով այն անշարժ կալուածների և դրամագլուխների հայադաւան եկեղեցուն վերադարձնելու խնդիրը, որոնք յանձնուած էին լուսաւորութեան մինիստրութեանը, համաձայն 1898 թուի մարտի 26-ի և 1903 թուի յուլիսի 12 ի մինիստրների կոմիտեի Բարձրագոյնս հաստատուած որոշումների. բ) մշակել, արքունի գանձարանի աջակցութեամբ, կանոնադրութեան ծրագիր այն գիւղացիների համար, որոնք ապրում են հայադաւան եկեղեցուն պատկանող կալուածներում, և ներկայացնել այդ ծրագիրը Մեր հաստատման, սահմանուած կարգով։ Այս մասին կառավարիչ սենատը պէտք է պատշաճաւոր տնօրինութիւնն անէ։

Իսկականի վրայ Նորին Մեծութեան Սեփհական ձեռքով ստորագրուած է

«ՆԻԿՈԼԱՅ»

Պետերհոֆում, 1 օգոստոսի 1905 թուի։

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՈՒԱԾ ՀԱՅԱԴԱՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՅՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Եկեղեցիներին պատկանող գոյքերի վերաբերմամբ։

1) Հայադաւան եկեղեցիների գոյքերի կառավարութիւնը յանձնւում է ծխական հոգաբարձութիւններին, բաղկացած երեցփոխից և անդամներից թուով 2—4, հաւասար իրաւունքներով, որոնց ընտրում են ծխականները իրենց միջից 3 տարով։

2) Ծխական հոգաբարձութիւնների անդամների ընտրութիւնը կատարւում է ծխականների ընդհանուր ժողովներում ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ և հաստատւում է թեմական առաջնորդից։

3) Ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի իրաւունք ունին ծխին պատկանող արական սեռի 25 տարին հասակ ունեցող բոլոր անձերը, որոնք օրինական իրաւունք են վայելում հասարակական պաշտօններ կատարելու և եկեղեցու ծխականներ են հաշւում ոչ պակաս քան 2 տարի։

4) Ծխական հոգաբարձուների վրայ պարտականութիւն է դրւում հոգ տանելու պատշաճաւոր թոյլտուութեամբ հիմնելու դպրոցներ, հիւանդանոցներ, անկելանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ։

5) Եթէ եկեղեցական եկամուտները բաւարարութիւն տալու չը լինին ծխերի բոլոր կարիքները հոգալու, առաջադրութիւն է անւում ծխականներից որոշ տուրք նշանակելու վերաբերմամբ. այդ տուրքը կարող է լինել միանուագ կամ մշտական, դրամով կամ իրերով։ Այդ առաջադրութիւնն առաջարկւում է ծխականների ընդհանուր ժողովի քննութեան և նրա կողմից ընդունուելուց և այդ մասին վճիռ կայացնելուց յետոյ պարտադիր է դառնում համաձայնութիւն յայտնողների համար։

6) Իւրաքանչիւր տարուայ ելևմուտի նախահաշիւը՝ կազմուած հոգաբարձութեան կողմից, ստանում է ծխականների ընդհանուր ժողովի հաւանութիւնը և հաստատւում է թեմական առաջնորդից։

7) Ծխական հոգաբարձութիւնները պարտաւոր են հաշիւ տալ թէ վիճակաւոր առաջնորդին և թէ ծխականների ընդհանուր ժողովներին, որոնք իւրաքանչիւր տարի ընտրում են առանձին վերստուգող յանձնաժողովներ հաշիւները ստուգելու համար։

Բ) Հոգևոր դպրոցներին պատկանող կալուածների մասին։

1) Հոգևոր դպրոցների կալուածները (Օր. ժող. XI հ. հրատ. 1886 թ. յօդ. 1266) կառավարում են առանձին հոգաբարձական խորհուրդներ՝ բաղկացած 12 հոգուց, նախագահութեամբ թեմական առաջնորդի։

2) Հոգաբարձական անդամներ ընտրելու համար, թեմական առաջնորդի կամ նրա կողմից նշանակուած անձի նախագահութեամբ, հրաւիրւում է վիճակային ընտրողների ժողով՝ երկու-երկու հոգի այն քաղաքի եկեղեցիներից, ուր գտնւում է դպրոցը. այդ անձերն ընտրւում են ծխականների ընդհանուր ժողովով ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ և մի-մի ընտրող իւրաքանչիւր գործակալութիւնից՝ ընտրուած գիւղական եկեղեցիների ներկայացուցիչների ժողովով։ Հոգաբարձական խորհրդի անդամներն ընտրւում են 4 տարով։

3) Հոգաբարձական խորհրդի անդամները հաստատւում են իրենց պաշտօնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից։

4) Հոգաբարձական խորհրդի անդամների կէսը 2 տարուց յետոյ դուրս է գալիս պաշտօնից և առաջին անգամ վիճակով։

5) Վիճակային ընտրողների ժողովը, հոգաբարձական խորհրդի լիազօրութեան ժամանակամիջոցում, ընտրում է վերստուգող յանձնաժողով, որի եզրակացութիւնը հաղորդւում է Էջմիածնի Սինոդին։

6) Տարեկան նախահաշիւները, ինչպէս նաև հոգաբարձական խորհուրդների հաշիւները, հաստատւում են Էջմիածնի Սինոդից։

Գ. Վանքապատկան գոյքերի կառավարութեան մասին։

1) Վանքապատկան գոյքերի կառավարութիւնը յանձնւում է վանական իշխանութեան։

2) Վանքապատկան գոյքերի կառավարութեան կանոնաւորութեան վրայ հսկելու համար կարող են հրաւիրուել թեմական առաջնորդի կողմից և աշխարհական անձեր՝ օգնելու վանքական իշխանութեան։

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

Սիրելեաց Մերոց և օրհնեալ հարազատից Մայր Աթոռոյս համայնից հայազանց, Շնորհազարդ եղբօր Մերում և Դիտապետի Տանն Կիլիկիոյ Տ. Սահակ Ս. Կաթուղիկոսի, Ամենապատիւ Սրբազան Պատրիարքաց Ս. Երուսաղէմի և Կ. Պոլսոյ՝ Տ. Յարութիւն և Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոսաց, Հոգեզգօն թեմակալ Արքեպիսկոպոսաց, Գերաշնորհ եպիսկոպոսաց, Հոգեշնորհ փոխանորդաց, Բարեշնորհ վանահարց և վարդապետաց, Արժանապատիւ աւագ երիցանց, Սրբասնուէր քահանայից, Մաքրակենցաղ կուսանաց, Շնորհունակ սարկաւագաց, դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, Պերճաշուք իշխանաւորաց, Գերազնիւ աստիճանաւորաց, տոհմային ազնուականաց, պատուելի վաճառականաց, մեծապատիւ հոգաբարձուաց, յարգելի երեսփոխանաց, մեծարելի ուսուցչաց և ուսուցչուհեաց, ժրաջան երիտասարդաց, վաստակասէր արհեստաւորաց, քրտնաջան մշակաց և երկրագործաց, պարկեշտասուն տիկնանց և օրիորդաց և ամենայն չափու հասակի ի Քրիստոս հաւատացելոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, որք ծնեալ և սնեալ կայք ի ծոց Կաթուղիկէ եկեղեցւոյս Հայաստանեայց, ողջոյն և օրհնութիւն յԱթոռակալէս Ս. Հօրն մերոյ՝ Գրիգորի Լուսաւորչի բազմասցի ի Ձեզ։ Ողորմութիւն Փրկչին և շնորհ Ս. Հոգւոյն եղիցի ի վերայ համայնիցդ։ Ամէն։

Ողջոյն Քեզ, եկեղեցի Հայոց, նորոգեալ և զարդարեալ, քանզի ի Քեզ ծագեաց վերստին շողն աստուածային և վերացաւ ի Քէն քօղն սգոյն։ Ողջոյն Քեզ, տառապեալ ժողովուրդ Հայոց, որ տօնես այսօր զտօն Նաւակատեաց և ցնծութիւն Մօրն Քո Եկեղեցւոյ ի շնորհս Մեծի Հովանաւորին Քո և Ամենաբարեպաշտ Կայսերն ամենայն Ռուսաց Նիկողայոսի Բ-ի։ Ողորմութիւն աստուածային տարածեցաւ այսօր ի վերայ Քո յետ

և նիրհը պաշարեց ինձ։

—Ո՞վ դու, անբաղդ,—հնչեց մի մեղմ, սրտագին ձայն մթութեան միջից։

Ես բարձրացրի գլուխս և տեսայ մի հրաշալի էակ։

Գեղեցիկ, լուրջ և թախծալից մի երես նայում էր ինձ իւր անմեղ աչքերի թափանցիկ հայեացքով։

Գեղեցիկ գլխի կարծես օդային գըծագրութեանը համապատասխանում էր նրա նեղ, երերուն իրանը, նրա երկար ու բարակ, կարծես տաշուած ձեռները և հազիւ հազ նկատելի մթի մէջ ոտները։

Երկար սպիտակ պատմուճանը լայն ծալքերով ընկած էր նրա ուսերի և կրծքի վրայ և, ծածկելով ոտները, փըռուել էր գետնին։

—Ո՞վ ես դու... ի՞նչ ես կամենում ինձնից,—շշնջացի ես ահ ու դողի մէջ։

Անծանօթ էակը մօտեցաւ ինձ, կարկառեց իւր գեղեցիկ ձեռը և լրջօրէն պատասխանեց.

—Ես Բարին եմ... ես եկել եմ քեզ մօտ և զոհ եմ պահանջում։

—Զո՞հ... ի՞նչ զոհ... և ո՞ւմից։

—Եւ դու դեռ հարցնո՞ւմ ես։

Եւ անծանօթ էակի երեսը դարձաւ աւելի լուրջ, աւելի թախծալից։

—Ես զոհ եմ պահանջում... քաւի՛ր մեղքերդ, այո՛... զարկեց քո օրհասական ժամը։ Այսօր երկար, երկար տարիներից յետոյ քո սիրտը կրկին մատչելի դարձաւ ինձ համար, բարութեան և սրբութեան համար. վաղուց դու, ով անբաղդ, դարձրել էիր քո երեսը ինձանից։ Երկար թափառում էիր դու գիշերային խաւարի մէջ, կորցնելով ճշմարտութեան ուղին և ահա այսօր, երկնային երգը, թափանցելով քո կոշտացած սրտի խորքը, յիշեցրեց քեզ քո վաղանցիկ ոսկի օրերդ։

—Ո՜հ, իմ անցեալը,—բացականչեցի ես և զգացի սրտումս մի սուր ցաւ։

—Այո, քո անցեալը, այն օրերը, երբ դու ճանաչում էիր, երկրպագում էիր ինձ և ես փայլում էի քեզ համար իբրև քո կեանքի լուսատու աստղը, քո փրկարար փարոսը... Տեսնո՞ւմ ես, ես կրկին եկայ քեզ մօտ, թէև վաղուց դու հեռացել էիր ինձնից, բնաւ մոռացել էիր ինձ... Ինչու, ի՞նչու այդպէս վարուեցար դու... Ես փաղաքշում էի քեզ, երբ դու, անմեղ մանուկ, դեռ պառկած էիր օրօրոցումդ. ես փայլում էի քո մանկական աչքերում, քո անմեղ ժպիտում, երբ դու քո անզօր, փոքրիկ ձեռներով փաթաթւում էիր քո մօր վզին։ Ես, կռացած քո օրօրոցիդ, ոսկի երազներ էի բաշխում քեզ և դարձել էի քո պահապան հրեշտակը։ Անցան տարիներ, դու մեծացար։ Ես առաջնորդում էի քո առաջին պատանեկական քայլերը, ես թելադրում էի քեզ քո յստակ, անմեղ ցանկութիւնները։ Ցանուն իմ դու գործում էիր, կռւում։ Ցանուն իմ դու սիրեցիր ամբողջ մարդկութիւնը, մանաւանդ խեղճերին, ընկածներին, անբաղդներին. Նրանց արցունքները, նրանց կսկիծը դարձաւ քո կսկիծը, քո անձնական տանջանքը։ Դու մոռանում էիր քեզ, քո «ես»-ը և օգնում էիր նրանց... Օ՜, այն ժամանակ դու ճանաչում էիր ինձ, հաշտ ապրում էիր ինձ հետ և այն ժամանակ դու մեծ էիր։ Այն սերմը, որ ես ձգեցի քո սիրտը, չփտաւ։ Նա գըտաւ իւր պարարտ հողը և ծլեց։ Ես ուրախացայ, ես ցնծացի և տօնում էի իմ յաղթանակը, երբ...

Էակի մեղմ, սրտագին ձայնը յանկարծ դողաց, կըտրուեց և նրա դէմքը, այդ աստուածային դէմքը, դարձաւ տխուր, մռայլ։

Կեանքի ցուրտը փչեց քո երեսին, նորածիլ սերմը քո սրտում սառեց, կորաւ և լոյսը տեղի տուեց մռայլ խաւարին։ Երկար, շատ երկար թափառեցիր դու այդ խաւարում, մոռացար իսպառ ինձ, մոռացար քո իդէալները, մոռացար քո խեղճ, երեսի վրայ թողած եղբայրներին։ Դու խլացար, և նրանց աղիողորմ հառաչանքները, նրանց լաց ու կոծը չէին հասնում այլ ևս քո ականջին։ Դու հեռացար նրանցից։ Դու ձգեցիր քեզ կեանքի շլացնող, արտաքուստ միայն ցոլացող կեանքի կատաղի հոսանքի մէջ և իբրև ծարաւի՝ անյագուրդ սկսեցիր ըմպել կեանքի զուարճութեան բաժակը։ Դու սկսեցիր ապրել միայն քեզ համար և քո չար «ես»-ը տարաւ իւր յաղթանակը։ Ուրիշ մի կին դարձաւ քո աստուածը, քո կուռքը։ Դու երկրպագում էիր միայն նրան, նրա առաջ աղօթում և խունկ ու զմուռս ծխում։ Չարը փոխարինեց ինձ։ Ես յաղթուած էի։ Ես ողբում էի, ես, կորցնելով քեզ, տանջւում էի անասելի տանջանքներով... բայց միշտ յոյս ունէի, որ մի օր կըգտնեմ քեզ, կրկին դու կըդառնաս իմը, և ահա դու վերադարձար վերջապէս... դու ճանաչեցիր ինձ։

—Այո... այո, ես ճանաչեցի քեզ,—բացականչեցի ես ուրախ ու զուարթ.—Դու էիր, որ երբեմն, կեանքիս ամենադըժուար րոպէներին, սփոփում էիր ինձ և ոյժ տալիս... դու էիր իմ կեանքի նպատակը. դու այն ամեն յստակը, մաքուրը, լուսաւորն էիր, ինչ որ կար իմ կեանքում։ Այո՛, ես ճանաչեցի քեզ։

—Եւ դու կրկին իմն ես,—շարունակեց նա,—թող ուրեմն քո այդ պիղծ, կեղտոտ կեանքը, որ նուիրուած է միմիայն մամոնային ու չարութեան, և կրկին գնա բարութեան ու ճշմարտութեան շաւղով. նա ծանր է, փշոտ, բայց առաքինի։ Քրիստոսի խաչն էլ ծանր էր, բայց Նա վերցրեց այն Իւր ուսերին և փրկեց աշխարհը։ Առ, իմ որդեակ, և դու քո խաչը և եկ ինձ հետ կռուելու չարութեան դէմ։ Գնա դէպի լոյս, դէպի բարին, դէպի սուրբ ճշմարտութիւնը և դու կրկին կըդառնաս մեծ։ Տես, քո եղբայրները, քո քոյրերը չարաչար տանջւում են, նրանք անօթի և ծարաւի են, նրանք խեղճ են, սըրտաճմլիկ աղերսում են քո օգնութեանը և կարկառում են դէպի քեզ իրենց ոսկրոտ, չորացած, արիւնաներկ, դողդոջուն ձեռները... Մի ձգիր նրանց առաջ հացի փոխարէն քար և մի դարձըներ քո երեսն այդ ողորմելիներից...

Նա մօտեցաւ ինձ աւելի ևս և նրա շունչը դիպաւ երեսիս։

— Եկ ինձ հետ,—շշնջաց նա,—և կըրկին քո փայլուն, ոսկի անցեալդ կըվերադառնայ, կրկին կը ճանաչես դու Աստծուն և Աստուած կապրի քեզանում...

Նա թեքուեց դէպի ինձ, փաղաքշաբար նայեց ինձ և իւր փոքրիկ ձեռներով սեղմեց իմ ձեռը։ Այդ րոպէին սենեակիս միւս անկիւնում լսուեց մի բարձր, կծու ծիծաղ։

Ես ցնցուեցի—և վերկացայ տեղիցս։

Իմ առաջ կանգնած էր կիսամերկ մի կին։ Նրա երեսը փայլում էր մի տըռփոտ գեղեցկութեամբ և զգայնական հրապոյրով։ Նրա խոշոր, այրող աչքերը հեգնօրէն նայում էին ինձ և նրա մերկ, սպիտակ մարմարոնեայ կուրծքը կիսածածկուած թափանցիկ մետաքսեայ շղարշով, շուտ շուտ բարձրանում և իջնում էր։ Խաղողի տերևները զարդարում էին նրա զգեստը։ Մերկ ոտներին նա հագած ունէր փոքրիկ հովւէական սանդալներ. ոսկէ ապարանջանները զարդարում էին նրա մերկ ձեռները։ Նրա սև մազերը փրփրաւոր գանգուրներով ընկնում էին նրա գեղեցիկ պարանոցին, մերկ, կլորիկ ուսերին և կրծքին։

—Հա՜... հա՜... հա՜..., լսուեց գիշերային լռութեան մէջ նրա սուր ծիծաղը.—քաւութեան կոմեդիա... հա՜... հա՜... հա՜...

Բարի ոգին սգաւոր, գլխիկոր քաշուեց անկիւնը։

—Դարձ դէպի անցեալը... վատ չէ, հա՜... հա՜... հա՜...

—Հեռացի՛ր այստեղից, Չար ոգի, քո տեղն այստեղ չէ,—շշնջաց Բարի ոգին,—դու պիղծ ես և ամեն ինչ պղծում ես...

—Այո... ես Չար ոգին եմ և նա իմն է,—պատասխանեց կինը և մատնացոյց արաւ ինձ։

—Նա իմն է,—կրկնեց նա և դրեց իւր ձեռն ուսիս.—Նա իմն է վաղուց։ Ես տալիս եմ նրան կեանքի հրճուանքները, հրապոյրները. նրա կրծքում ես վառում եմ սիրոյ կրակը և իմ համբոյրների, իմ գրկախառնութեան մէջ նա գտնում է երջանկութիւն, իւր բաղդը, իւր երկրային դրախտը։ Նրա կեանքի ուղին ես զարդարեցի անուշահոտ ծաղիկներով։ Ես հեռացրի նրանից տանջանքը, կսկիծը, հոգսերը և արցունքը։ Ամբողջ նրա կեանքը ես դարձրի մի խնճոյք, մի անվերջ խնճոյք... Նա իմն է... իմը...

Եւ նրա տոփող, այրող աչքերը հանդիպեցին իմ աչքերիս, և իմ մարմնով անցաւ մի սարսուռ։

—Մի հաւատա նրան,—բացականչեց Բարի ոգին,—մի հաւատա... Նա կը քնեցնէ քեզ, քո հոգին իւր ծախու փաղաքշանքներով, իւր օձային համբոյրներով։ Նա կը դարձնէ քո կեանքը մի շարք անմիտ, դատարկ, րոպէական զուարճութիւններ. դու կապրես անասնական կեանքով և սուրբ անունը, Նրա վեհ կոչումը դու կըցխոտես կեանքի գարշելի ցեխով. իբրև խեղկատակ դու կըզմայլես նրա պղպջուն ցոլքով և մինչ տակուցը կըխմես կեանքի դառն բաժակը... Իսկ յետոյ... յետոյ—հիասթափումն, կսկիծ, լաց... ցաւերը կըտիրեն քո հոգեղէն մարմնին, տանջանքները սրտիդ և իբրև որդեր կըծակոտեն նրան։ Դու կըմոռանաս Աստծուն... Ուշքի եկ... դեռ ուշ չէ... հետևիր ինձ։

Իսկ Չար ոգին ամբողջ իւր կըրակոտ մարմնով պինդ սեղմուել էր ինձ և փսփսում էր ականջիս.

—Մնա ինձ հետ... Մի գնա... Ես կըտամ քեզ սիրոյ այնպիսի գիշերներ, որ դու երբեք տեսած չես։ Գինին կըցոլայ գոյնզգոյն ապակեայ ամանների մէջ... երկնային մեղեդին կըհնչէ քեզ համար և իմ կրակոտ գգուանքների մէջ դու կը գտնես մի վերին երջանկութիւն, մի դրախտ։

Իսկ Բարի ոգին դանդաղ հեռանում էր։ Դրան չհասած նա մի անգամ ևս կանգ առաւ և տխրագին դարձաւ ինձ.

—Փախիր սատանայական պատրանքներից... յիշիր ջութակի այն երկնային մեղեդիները...

Իսկ Չար ոգին աւելի պինդ սեղմւում էր ինձ. ես զգում էի երեսիս վրայ նրա տաք շունչը, նրա կրակոտ շրթունքները դիպչում էին իմ շրթունքներիս և նրա ձեռները փաթաթուել էին վզովս։

—Ոչ... ոչ... մնա ինձ հետ, իմ սիրելիս...

—Յիշիր ջութակի հրաշալի մեղեդին,—կրկին լսուեց սենեակիս անկիւնում,—յիշիր...

—Թո՛ղ ինձ, թո՛ղ... Նա, Բարի ոգին, կանչում է ինձ... և ես պիտի գնամ,—բացականչեցի ես, աշխատելով ազատուել Չար ոգու գգուանքներից, բայց այդ րոպէին նրա շրթունքները դրոշմեցին իմ չորացած շրթունքներիս վըրայ մի երկար, երկար համբոյր։ Արիւնըս խփեց գլխիս, աչքերս մթնեցին և իմ ականջներիս հասաւ մի սուր ճիչ մի յաղթական ծիծաղ...

Դա ծիծաղում էր Չար ոգին...

—

Ես զարթեցի։

Գրասեղանիս լապտերը վաղուց մարել էր։ Սենեակում ոչոք չկար. պատուհանից նայում էր արդէն արշալոյսը. հեռու հորիզոնը ծածկուել էր երփներանգ ցոլքերով։

ԳԷՈՐԳ ԶՈՒՐԱՐ

տառապանաց վերջին ամաց և փառազարդեցաւ եկեղեցին և մխիթարեցար դու լիապէս, ժողովուրդ Հայոց: Եւ ես նորոգեալ ծերութեամբ իմով խնդակից փառաց իմոյ եկեղեցւոյ և ուրախակից Հարազատերդ՝ իմոց սիրելեաց, ողջունեմ զձեզ վասն մեծի շնորհացն Կայսերականի և շնորհաւորեմ զտօն ցնծութեան Ձեր: Օրհնեալ է Աստուած, որ խնայեաց յեկեղեցի Միածնի որդւոյ իւրոյ և ի սգաւոր ժողովուրդ նորա, ցնծացէք ընդ սաղմոսերգուին և ասացէք. «Տէր, ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ»: Այլ և Հանապազօրհներգեմ զիմ նուագն առ Աստուած իմ. «Գովեցայց զքեզ, Տէր. բոլորով սրտիւ իմով, պատմեցից զամենայն սքանչելիս քո, ուրախ եղէց և ցնծացայց ի քեզ, սաղմոս ասացից անուան քում, Բարձրեալ»:

Տառապանք քո և նեղութիւնք, զոր կրեցեր յանձին առ ի պաշտպանութիւն սեփական իրաւանց եկեղեցւոյ քո սրբոյ ընդունելի եղեն յաչս Ամենակալ Տեառն զօրութեանց, որ շարժեաց զսիրտ և զգութ արդարադատ Թագաւորին Մերոյ, զի սիրտ թագաւորաց ի ձեռս Աստուծոյ, և Ողորմած Կայսրն Մեր վերադարձոյց եկեղեցւոյ մերում զդարաւոր արտօնութիւնս նորա և շնորհեաց նմա զհոգդաստիարակութիւն զաւակաց քոց: Արդ որ արժանացար վերստին մեծի վստահութեան Կայսերականի և շնորհաց յետ բազմաւոր նեղակրութեանց և տօնես այսօր զտօն նաւակատեաց եկեղեցւոյ, յուշ լիցին քեզ աւուրք տառապանաց քոց, յուշ լիցին քեզ աւուրք սգոյ քո, և դու ուխտեա առաջի Աստուծոյ սիրել յաւէտ և պաշտել զհարազատ Մայրն քո զսուրբ եկեղեցին Հայաստանեայց, ուխտեա սիրել զեղբայրն քո, զհարազատն և զհամազգին, կալ մնալ սիրով խաղաղութեամբ և համբերատարութեամբ ընդ միմեանս:

Իսկ ես ի մուտս արևու իմոյ աղօթեմ և աղաչեմ զՄիածին բանն Աստուած, զի հաստատուն և յարատև պահեսցէ զՏաճարն իւր Սուրբ զՄայր Աթոռն Հայաստանեայց, աղօթեմ, զի շնորհեսցէ Տէր կեանս երկարս և անփորձս Մեծի Թագաւորին Մերում և Կայսերն ամենայն Ռուսաց Նիկողայոսի Բ-ի, որ բանիւ հրամանի իւրոյ եբարձ զքօղն սգոյ և տառապանաց եկեղեցւոյս և ժողովրդեանս: Ձեռն Տեառն ընկալցի զնա և բազուկ Ամենակալին զօրացուսցէ զնա: Դու ևս մաղթեա ի բոլոր սրտէ, զի Տէր զօրութեանց լիցի ընդ նմա ի տուէ և ի գիշերի, պահելով զնորին Մեծութիւն առողջ և անփորձ հանդերձ ժառանգօք և արքայազգի Հարազատօք: Եւ օրհնեսցէ Տէր զձեզ զամենեսեանդ երկնային օրհնութեամբ ի տրիտուր ջանից Ձերոց և վաստակոց, զոր վաստակեցայք և աշխատ եղէք բանիւ և գրով, աղերսանօք և աղաչանօք շարժել զսիրտ Մեծի Միապետին խնայել եկեղեցին և ի մանկունս նորա: Տացէ Տէր ամենեցունդ վարձս ըստ վաստակոց Ձերոց, աճեցուցանելով և բազմացուցանելով զձեզ և զզաւակունս Ձեր և պահեսցէ զձեզ աննկուն հոգւով, սուրբ սրտիւ, հաստատուն հաւատով, միաբան սիրով և համբերատար գործունէութեամբ ընդ հովանեաւ մօրն լուսոյ Ս. Էջմիածնի ի փառս Աստուածութեան իւրոյ: Ամէն:

Ի վերայ կոնդակին ստորագրեալ է Մկրտիչ Կաթողիկոս ամենայն Հայոց:

Տուաւ կոնդակս շնորհաւորական յամի շնորհաց Փրկչին 1905, յեօթներորդում աւուր ամսեանն Օգոստոսի և ըստ Տումարիս մերում ՌՅԾԴ և Հայրապետութեան Մերոյ ԺԲ: ամի: Թ. 664.

ԱՐԵԱՆ ԵՒ ԿՐԱԿԻ ՎԱՅՐԵՐԻՑ

Բագուից և Երևանի նահանգից յետոյ արեան և կրակի վայր են դարձել այժմս Գանձակի նահանգը և դարձեալ Բագուն, որի վրայ փետրուարի անցքերից յետոյ կարծես աստուածային անէծք է ծանրացած առ միշտ:

Այս անգամ գործն սկսուեց Գանձակի նահանգում Աղդամի հարթավայրից, որտեղ օգոստոսի սկզբներին մասնաւոր մի ընդհարում էր տեղի ունեցել հայ գիւղացիների և թափառական թուրքերի միջև 7 ոչխարի պատճառով, որ թուրքերը գողացել էին հայերից: Այս ընդհարման միջոցին սպանուել էին 2 թուրք և վիրաւորուել մի քանի հայ: Այս դէպքի առթիւ թուրքերի մէջ լուրեր էին տարածել, թէ հայերը յարձակուել են թուրք թափառականների վրայ, կոտորել էին նրանցից շատերին իրենց կանանց ու երեխանց հետ և աւարի մատնել նրանց գոյքերը: Թուրք ամբոխը, գրգռուած այս լուրերից, թափուել էր անցքի վայրը, սակայն իշխանութիւնը շուտով աջողուել էր համոզել նրան, որ այդ լուրերը սաստիկ չափազանցրած են, որ գործը վերաբերում է սովորական մի գողութեան: Ամբոխը հանգստացել էր: Բայց այս դէպքից օգուտ քաղելով, աւազակաբարոյ թուրքերից շատերը հրոսակախմբեր էին կազմել և սկսել էին Աղդամի և Շուշու ճանապարհին կողոպտել հայ ճանապարհորդներին, խլելով նրանց նոյն իսկ հագուստները: Այնուհետև նրանք, աւելի յանդուգն դառնալով, յարձակուեցին Աղդամի օղեգործարանների վրայ, աւերեցին ու հրդեհեցին և իրենց ձեռքն ընկած հայ բանուորներին ու ծառայողներին սպանեցին:

Գործն անցաւ Շուշի, որտեղ կատարուած դէպքերի մասին պաշտօնական հեռագիրը հաղորդում էր, ի միջի այլոց, հետևեալը.

«Օգոստոսի 16-ին, մասնաւոր անձերի ընդհարման հետևանքով, Շուշու բնակչութիւնը զէնքի դիմեց, բաժանուելով ըստ ազգութիւնների, որոնք դիրքեր բռնելով, սկսեցին հրացաններ պարպել. ընդ սմին թուրքերն աշխատում էին խուժել հայաբնակ մասը, հայերը—թուրքերի մասը. 18-ին աջողուեց ժողովել երկու ազգութիւնների ներկայացուցիչներին, սպիտակներ շրջեցնել քաղաքում հաշտութիւն քարոզելով, բայց փոխադարձ թոյլ հրացանաձգութիւնը շարունակւում էր և տարածւում էին հրդեհները, որոնց նպաստում էր քամին. 19-ին նորից հաւաքուեցին հոգևորականութիւնը և բնակչութեան ներկայացուցիչները, որոնց հետ նահանգապետը պտտեց քաղաքում, բայց փոխադարձ հրացանաձգութիւնը, որ դադարելու վրայ էր, նորից շարունակուեց. 20-ի գիշերը հրդեհուեց մի տուն, որից կրքերը նորից գրգռուեցին. 20-ի առաւօտեան հրացանաձգութիւնը նորոգուեց աւելի մեծ ուժով, տեղի ունեցաւ մի նոր հրդեհ, բայց թուրքերի քաղաք ներս խուժած բազմութեան աջողուեց հոգևորականութեան հանդիսաւոր թափօր կազմել. 20-ից յետոյ քաղաքում անդորրութիւն է տիրում: Գաւառներում ընդհարումներ եղան: Ընդամենը սպանուած և վիրաւորուած է մօտաւորապէս 200 հոգի. այրուած է մօտ 200 տուն»:

Իսկ Շուշու թեմական առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը հեռագրում է, ի միջի այլոց.

«Հինգ օրուայ ընթացքում սարսափելի հրացանաձգութիւն էր տեղի ունենում երկու կողմից ևս: Հայերի կրած նիւթական վնասը մեծ է: Քաղաքի գլխաւոր փողոցը իւր բոլոր հարուստ շէնքերով, տներով և խանութներով այրուած է սարսափելի հրդեհից, որը բռնել էր երկու եկեղեցիների շրջակայքը: Եկեղեցիներն անվնաս են մնացել, բայց մի քանի նշաններից երևում է, որ ուզեցել են հրդեհել Ագուլեցոց եկեղեցին, բայց չի աջողուել: Եկեղեցին մասամբ կողոպտուած է: Մարդկային զոհերի թիւը մեծ չէ: Հեռագրական հաղորդակցութիւնը հրդեհի պատճառով ընդհատուած էր: Գաւառներում յարաբերութիւնները խիստ լարուած են: Յարձակում է գործուած Ամարասի վանքի վրայ: Արաքսի այն կողմը թուրքերը դարան են մտել գիւղերի վրայ յարձակուելու համար»:

Այժմ քաղաքում հացի մեծ պակասութիւն է զգացւում: Գիւղերից կենսական մթերք չի ներմուծւում քաղաք:

Զանգեզուրի գաւառում հայոց կոտորածը սկսուած է օգոստոսի 20-ից. բնաջինջ են արուած Մինքէնդ, Խոզնաւար և Զէյվա հայ գիւղերը: Միւս գիւղերը պաշարուած են թափառական թուրքերով:

Շատ տեղերում զօրք չկայ, շատ տեղերում էլ նրանց թիւը խիստ քիչ է:

Գանձակում առ այժմ անդորրութիւն է տիրում:

Ինչ վերաբերում է Բագուին, այնտեղ կատարուած անցքերը ներկայանում են հետևեալ կերպով, ըստ պաշտօնական հեռագրերի.

20 օգոստոսի: «Երեկոյեան ժամը 5-ին քաղաքում հրացանաձգութիւն սկսուեց թուրքերի և հայերի միջև: Կան սպանուածներ երկու կողմից էլ: Պատճառը մի հայի և թուրքի միջև եղած վէճն և մէկը միւսի ձեռքով սպանուելն է»:

21 օգոստոսի: «Հրացանաձգութիւնը քաղաքում 21-ին, օրուայ ժամը 5-ին, դադարեց: Այսօր սպանուած և վիրաւորուած չկայ: Երեկ սպանուած է յիսուն հոգուց աւելի և մօտ նոյնքան էլ վիրաւորուած է: Վնասուածների մեծ մասը թուրք է: Վիրաւորուած է պրիստաւ Նիժերաձէ»:

21 օգոստոսի, երեկոյեան: «Հրացանաձգութիւնը, որ դադարել էր ցերեկը, նորոգուեց երեկոյեան աւելի մեծ ուժով: Թուրքերը յարձակում գործեցին զօրքերի վրայ, բայց անյաջող»:

23 օգոստոսի: «Օգոստոսի 22-ին հրացանաձգութիւնը, որ աւելի սաստիկ էր առաւօտեան, ընդհանուր-նահանգապետի ձեռք առած միջոցների շնորհիւ, նուազեց երեկոյեան դէմ: Ընդհարումներ եղան զօրքերի հետ, որոնց մէջ կան զոհեր: Մեծ ուժով բռնկեց հրացանաձգութիւնը Բալախանու նաւթահանքերում, որտեղ գործը բարդուեց սաստիկ հրդեհով: Գիշերը հրձիգութեան փորձեր եղան նաւթահանքերում և քաղաքում, բայց ամէն տեղ էլ հրդեհները շուտով դադարեցին: Այսօր, 23 ին, հրացանաձգութիւնները հատ ու կէնտ են: Սև քաղաքն այրւում է. պատճառը յայտնի չէ: Զօրքերը գործում են եռանդով: Անկարգութիւնների 3 օրուայ ընթացքում սպանուած է 50 հոգի և նոյնքան էլ վիրաւորուած»:

24 օգոստոսի: «Դրութիւնը չափազանց ծանր է: Երեկ, չնայելով հաշտութեան, հրացանաձգութիւնը երեկոյեան սաստկացաւ: Գնդակներ էին տեղում ընդհանուր-նահանգապետի տան վրայ: Իսկ Բալախանում զօրքը քիչ էր. օգնական զօրքեր ուղարկուեցին. գործի դրուեցին թնդանօթներ: Սարսափելի հրդեհը ոչնչացրեց նաւթահանքերի մեծ մասը: Այսօր առաւօտեանից փոխադարձ հրացանաձգութեան հետ միասին քաղաքում հրձիգութիւններ են լինում: Փոթորիկը և զօրքերի անբաւարարութիւնը զրկում են նրանց առաջն առնելու հնարաւորութիւնից»:

Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վարոնցով-Դաշկովը Կիսլավոդսկից հետևեալ հեռագիրն է խփել Բագուի ընդհ. նահանգապետ գեն. Ֆադդէևին.

«Հրացանաձիգ բատալիոնը Թիֆլիսից ուղարկւում է, բայց ձեզ յանձնուած տեղական զօրքերին հրամայում եմ չբաւականանալ հաշտարար դեր կատարելով, այլ անխնայ ամենավճռական գործողութիւնների դիմել ապստամբների դէմ, հալածելով նրանց մինչև վերջը»:

25 օգոստոսի: «Հաշտութիւն կայացաւ, բայց հատ ու կէնտ հրացանաձգութիւններ, երբեմն զոհերով, շարունակւում են: Գիշերն երբեմն-երբեմն հրձիգութիւններ եղան, որոնք աջողուեցին, բայց մարդկային զոհեր չեղան: Առանձնապէս վնասուեցին նաւթահանքերը»:

25 օգոստոսի, երեկոյեան: «Երեկ երեկոյեան ժամը 5-ից ի վեր քաղաքում անդորրութիւն է տիրում: Հրացանաձգութիւնը դադարել է: Հրդեհները հանգցնում են: Այրուող տները հանգչելու վրայ են: Երթևեկութիւնը փողոցներում վերականգնել է: Զօրքերը հանգչում են»:

ԱԶԴ

„Նոր-Դար"-ի բաժանորդագրութիւնը շարունակւում է:

Նրանք, որոնք դեռ չեն վերանորոգել բաժանորդագրութիւնը և կամենում են շարունակ ստանալ „Նոր-Դար"-ը, թող շտապեն բաժանորդ գրուել, որպէս զի ժամանակին կարողանանք հասցէները տպել տալ և որոշել տպուելիք համարների քանակը:

Առաջիկայ սեպտեմբերին „Նոր-Դար"-ը կուղարկուի ՄԻՄԻԱՅՆ նրանց, որոնք բաժանորդ են գրուել:

Թերթի բաժանորդագինը սեպտեմբերից ց31 դեկտեմբերի 4 ր. 50 կ. է, արտասահմանից բաժանորդ գրուողը վճարում է 20 ֆրանկ:

Բաժանորդ գրուողից խնդրում ենք գրել անունը, ազգանունը և հասցէն պարզ և որոշ:

Յատուկ շնորհակալութիւն խմբագրութեան կողմից նրանց, որոնք 1904 թ. բաժանորդագինն ուղարկած լինելով, նորից առաջիկայ չորս ամսուայ վճար են ուղարկել. նոյնպէս շնորհակալութիւն նրանց, որոնք նշանակուած գինից աւելի գումար են ուղարկել խմբագրութեան:

Անտարակոյս այդ բաժանորդները կամեցել են օգնել գործին, ի նկատի առնելով «Նոր-Դար»-ի կրած վնասները և առաջիկայում անելիք ծախքերը:

ՔՐՈՆԻԿՈՆ

— Կ. Պոլսի պատրիարք սրբ. Օրմանեանը ռուսաց դեսպան պ. Զինովևի միջոցով իւր հօտի կողմից շնորհակալութիւն է յայտնել Թագաւոր Կայսրին հայոց եկեղեցապատկան գոյքերն ու դպրոցները վերադարձնելու համար:

— Կարսի զինուորական նահանգապետը դիմել է Էրզրումի ռուսաց հիւպատոսին թուրք իշխանութիւնից պահանջելու, որ սահմանի վրայ թուրք սահմանապահներն աւելի խիստ հսկողութիւն ունենան, որովհետև Թիւրքիայից շարունակ քիւրդ աւազակներ են մտնում ռուսաց սահմանը զանազան ոճիրներ գործելու համար:

— Ռոստովում ապրող թրքահպատակ և պարսկահպատակ հայերը օգոստոսի 14-ին հաւաքուել էին Ս. Խաչ վանքում և հայոց եկեղեցական գոյքերի ու դպրոցների վերադարձման առթիւ գոհաբանական մաղթանք կատարելուց յետոյ վճռել են Ռոստովում եկեղ.-ծխական դպրոց բանալ:

— Եգիպտոսի հանգուցեալ [illegible] Նուբար-փաշայի որդին, Պօղոս-փաշան, Կահիրէում իւր հաշուով հիմնել է հայոց առևտրական բարձրագոյն մի դպրոց, որը իւր տեսակում միակն է ամբողջ Եգիպտոսում: «Arménien»-ի ասելով, այդ դպրոցում, բացի հայոց լեզուից, աւանդուելու են արաբական, անգլերէն և ֆրանսերէն լեզուները իբրև պարտադիր առարկաներ: Աշակերտել կարող են նաև օտարականներ, որոնց համար հայերէն լեզուի ուսումը, սակայն, պարտադիր չէ: Կանոնադրութեան համաձայն, հոգաբարձութեան մշտական անդամներ լինելու են դպրոցի հիմնադիրը և իւր որդիքը: Միւս անդամները, չորս հոգուց ոչ պակաս, ընտրւում են կահիրէաբնակ հայ մեծամեծներից: Հիմնադրի որոշումով, հայազաւակների թիւը պիտի լինի աշակերտների ընդհանուր թուի $2/3$-ից ոչ պակաս, իսկ օտարականներինը—$1/4$-ից ոչ աւելի: Թոշակաւոր և գիշերօթիկ աշակերտ կարող են լինել միմիայն հայազաւակները, հայ-կաթոլիկները և հայ-բողոքականները: Հիմնադրի նպատակն է դէպի այդ դպրոցը գրաւել հայ պատանեկութիւնը բոլոր երկրներից, որի համար Եգիպտոսի կլիման կարող է առանձնապէս նպաստաւոր լինել:

— Ի նկատի ունենալով, որ Բագուի անցքերը սպառնում են դադարեցնել Վոլգայի արդիւնաբերական շրջանի գործունէութիւնը, Նիժնի-Նովգորոդի բորսային կոմիտետը խնդրել է ֆինանսների մինիստրին, որ եռանդուն միջոցներ ձեռք առնուեն գործը կանոնաւորելու համար:

— Բագուի նաւթահանքերի ոչնչացման պատճառով նաւթի գինը սաստիկ բարձրացել է Թիֆլիսում և ամեն տեղ:

— Օգոստոսի 24-ին վերջացած է երկաթուղու Ուլուխանլու-Ջուլֆա գծի կառուցումը:

— Մայրաքաղաքի թերթերի ասելով, վերջնականապէս վճռուած է ներում շնորհել քաղաքական և կրօնական յանցաւորներին: Ներումը յայտարարուելու է պատերազմական գործողութիւնները դադարելուց վերաբերեալ հրովարտակի հետ միաժամանակ:

— Պետերբուրգից հաղորդում են արտասահմանի լրագրներին, որ ներքին գործերի մինիստր հոֆմայստեր Բուլըգինի հրաժարականն ընդունուած է և նրա տեղ նշանակւում է Կիևի, Պոդոլի և Վոլինի նախկին ընդհ.-նահանգապետ կոմս Իգնատիև:

— Կովկասում զեմստվային հաստատութիւններ մտցնելու համար շուտով տեղի պիտի ունենան գաւառական խորհրդակցութիւններ: Վաղարշապատի շրջանում այդ խորհրդակցութիւններին մասնակցելու համար վեց գիւղերի կողմից ներկայացուցիչ է ընտրուած պ. Յ. Յովհաննիսեան, իսկ Ս. Էջմիածնի վանքի կողմից, որը գաւառի խոշոր կալուածատէրերից մէկն է, ներկայացուցիչ է նշանակուած, «Нов. Об.»-ի ասելով, Խաչիկ վարդապետը:

— Այս օրերս Բագւում, «Կաւկազ և Մերկուրի» շոգենաւային ընկերութեան ապրանքների պահեստում բռնուած է չորս արկղ փամփուշտ, թուով 7000 հատ: Բացայայտուած է, որ այդ փամփուշտները պիտի ստանար Շամախու բնակիչ մի թուրք՝ Ալի-Սաֆթար Հաջի-Սամէդ-օղլի Հալովերդով: Գործը, «Кав.»-ի ասելով, յանձնուած է հաշտարար դատարանին:

— Մոսկուայից «Т. Л.»-ին հեռագրում են, որ օգոստոսի 25-ին պարսից շահի այնտեղով անցնելիս նորին մեծութեանը ներկայացել է մի հայ պատգամաւորութիւն:

«Նոր-Դ.»-ի առաջին համարը տպել էինք 3000 օրինակ, աւելի չէինք տպել. այդ պատճառով յիշեալ համարը ստիպուած էինք երկրորդ անգամ տպել տալ Թիֆլիսից դուրս ուղարկելու համար, որովհետև յուլիսի 3-ի առաւօտը լոյս տեսած բոլոր օրինակները սպառուեցան Թիֆլիսում:

Յուլիսի 3 ին «Նոր-Դար»-ի առաջին համարը լոյս տեսնելուց յետոյ թերթի վերականգնման առթիւ խմբագրութիւնս ստացել է Կովկասի և Ռուսիայի հեռաւոր քաղաքներից, Եւրոպայի զանազան երկրներից, Ամերիկայի ուսանող հայերից, Եգիպտոսից շնորհաւորական հեռագրեր և նամակներ լի համակրութեան արտայայտութիւններով և բարեմաղթութիւններով: Թերթիս խմբագրապետը և խմբագրութիւնը իրենց քաղցր պարտաւորութիւնն են համարում այստեղ յայտնելու ամենքին իրենց խորին շնորհակալութիւնը:

Սոյն յայտարարութեան փոխարէն լոյս տեսնող համարով կրկին հրաւիրում ենք մեր գրչի սովորական աշխատակիցներին, ինչպէս և թղթակիցներին և լրատուներին ի գործակցութիւն. Առանձնապէս թղթակիցների և լրատուների ուշադրութիւնն ենք դարձնում հետևեալ հանգամանքի վրայ. պոստով թէ հեռագրով խմբագրութեանս ուղղուած տեղեկութիւններն և լուրերը պէտք է շտապ և ժամանակին ուղարկուին:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍ գիւղից.—Այս գիւղը գտնւում է Նախիջևանի գաւառի և Դարալագեազի գաւառակի սահմանագծի վրայ, այս պատճառով այդ տարաբաղդ գիւղը մայիսի 13 ից սկսած ենթարկուած է անդադար յարձակման թուրքերի կողմից: Անցած յուլիս ամսի 18-ին Մարտիրոս գիւղի բնակիչները խնդրեցին իրենց գիւղը պաշտպանող կազակների խորունժի Գալաևից պաշտպանել իրենց թուրքերի յարձակումներից, որպէս զի իրենք կարողանան հնձել Նազլուր լեռան վրայ գտնուած իրենց խոտատեղերը, գիւղից 3—4 վերստ հեռաւորութեամբ: Պ. Գալաևը, լսելով նրանց խնդիրը, նշանակում է 10 հոգի կազակներ նրանց պաշտպանելու: Երբ մարտիրոսցիները սկսում են հնձել իրենց հացերը և թէ խոտանոցները, թուրքերը սկսում են հրացան արձակել նրանց պաշտպանող կազակների վրայ: Կազակները մարտիրոսցիները դառնում են գիւղը և յայտնում այդ մասին պ. Գալաևին: Միւս օրը պ. Գալաևը, վերցնելով իւր հետ 40 հոգի կազակներ, գնում է յիշուած տեղը (՝ազ-իրտ) հայերին պաշտպանելու, սակայն Նախիջևանի գաւառի թուրքերը միացած Դարալագեազի թուրքերի հետ, գլուխ ունենալով Նախիջևանի գաւառի Շահաթախտ գիւղի թուրքերին, կրկին յարձակւում են կազակների վրայ. սկսւում է փոխադարձ սաստիկ հրացանաձգութիւն երկու կողմերի մէջ: Այն ժամանակ թուրքերը վիրաւորում են երկու կազակների, որոնցից մէկը իսկոյն և եթ մեռնում է: Սպանուե՞լ են թէ ոչ թուրքերից և որքան—յայտնի չէ: Պատժուե՞լ են յանցաւոր թուրքերը թէ ոչ, նոյնպէս յայտնի չէ, միայն տեղիս գաւառապետ պ. Չերքեզովը, որը գնում է անմիջապէս Մարտիրոս գիւղը դէպքից յետոյ, քանի դեռ թաղուած չէր սպանուած կազակը, չնայելով խորունժի Գալաևի, կազակների և նոյն իսկ վիրաւոր կազակի ճշգրիտ զեկուցումներին, եթէ իրենց վրայ յարձակուողները թուրքեր էին,—ամբաստանում է և մեղադրում հայերին:

— Օգոստոսի 6-ին կալանաւորուեցին Երտափին գիւղից չորս հայեր, բոլորովին անիրաւացի կերպով. պատճառները մեզ յայտնի չեն: Ճնշուած թուրքերը կրկին սկսել կանգնեցին: Օգոստ. 5-ին քշեցին և տարան թուրքերը մալիշկեցի Մաթէոս Մնացականեանի 400 հատ ոչխարը և 60 հատ տաւարը, մի երկու օր էլ առաջ տարան մալիշկեցի հայերի 1500 խուրձ ցորենները:

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ.— «Դպրոցները բացւում են» ահա այն ուրախաբեր բառերը, որոնք հնչւում են մեր ամենիս բերանում ամեն դասակարգի ու շրջանի մէջ: Ամենքս յիշում ենք մեր դպրոցների այն փառաւոր շրջանը, երբ մեր ս. Փրկչի [illegible] և Սրբութեան օրիորդաց չորեքդասեան դպրոցները մտաւոր լուսաւորութեան մի մի կենդրոն էին մեր բազմամարդ ու բազմահայ գաւառի համար: Այժմեան անգոյն դպրոցները հիմնովին փոփոխութիւն են կրելու ուրեմն իրենց ներքին կազմով ու ծրագրով: Ալէքսանդրապոլցիներս յոյս ունինք, որ այդ յիշեալ երկու դպրոցն էլ դարձեալ չորեքդասեան կլինեն, իսկ Սահակ-Անուշեան օրիորդաց և ս. Նշանի տղայոց դպրոցները կլինեն երկդասեան: Դպրոց չէ ունեցել ս. Լուսաւորիչ եկեղեցին. այստեղ այժմ կարելի է բաց անել մի-դասեան դպրոց. ուրեմն հինգ դպրոց, որ շատ չէ Ալէքսանդրապոլի համար:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ. — Կալուածական հարցի լուծման հետ վերջնապէս կլուծուի և մեր գիւղի բաղանիքի հարցը. շատ երկար ժամանակ փակ մնաց այդ անհրաժեշտ և կարևոր շինութիւնը:

—Այգիների բերքը այս տարի սովորականից պակաս չէ. խաղողը, դեղձը լաւ խոստումներ են տալիս:

ԵՐԵՒԱՆԻՑ.—Շուշու, Բագուի վերջին սրտաճմլիկ և սրտեր յուզող դէպքերը նորից պղտորեցին, նորից բորբոքեցին այստեղ առժամանակ խաղաղուած սրտերը: Կարծում էինք թէ ամեն ինչ վերջացաւ, կարծում էինք թէ տխրութեան, հառաչանքի շրջանն անցաւ ու սկսւում է մեր ուրախութեան շրջանը: Բայց մաքերն այնքան յուզուած են, հոգիներն այնքան խռով, որ բաւական է մի լուցկի և դարձեալ հայի և թուրքի միջև բոցը կբռնկի և երկու կողմն իրար արիւն կխմեն: Տեսնենք թէ ինչպէս կվերջանայ այս աւերիչ կործանիչ ընթացքը: Այստեղ ցանկալի են համարում թուրք և հայ ողջամիտ մարդիկ միասին մի խնդրագիր պատրաստել Վեհ. Շահի անունով ու նրա ազդեցիկ միջամտութիւնը հայցեն Բալաջարով անցնելիս:

ՄԱՄՈՒԼԻ ՃՈՒՐՋԸ

Այն միջոցին, երբ ռուս մամուլի լաւագոյն մասը ցնծութեամբ ողջունում է Պորտսմուտում կնքուած հաշտութիւնը, «Нов. Вр.»-ն, ընդհակառակը, մռայլ տրամադրութիւն է ցոյց տալիս:

Կառավարութեան սխալմունքները, հասարակութեան մեղքերը, մեր զինուորական և ծովային գործի ղեկավարների անփութութիւնն ու ապիկարութիւնը, մեր դիւանագիտութեան կարճատեսութիւնը—ահա այն ամենագլխաւոր պատճառները, որոնք առաջ բերին Ռուսիայի պատմական ամբողջ կեանքում անօրինակ այս հաշտութիւնը, մի հաշտութիւն, որ դեռ ևս երեկ մտքովն անգամ չէին անցկացնում մեր ամենակատաղի թշնամիներն անգամ:

«Թող Անգլիայում խաղաղութեանը հաւատան բորսայի ազդեցիկ մարդիկ,—գրում էր պահպանողական «Spectator»-ը,—ինչ վերաբերում է մեզ, մենք կը մնանք այն համոզմանքին, որ պատերազմի դաշտում կէս միլիոն զօրաբանակ ունենալով, Ռուսիան չի կարող (ստորագծումը անգլիական թերթինն է) խաղաղութիւն գնել, քանի որ այդ զօրաբանակը ջարդուած չէ: Խիստ ծանր կլինէր այդ զօրաբանակի զինուորական արժանապատուութեանը հասցրած հարուածը»:

Եւ սակայն այդ հարուածը հասցրին, հասցրին այն միջոցին, երբ մեր զօրաբանակը, ըստ ամենայն տեղեկութիւնների, վարժուած է աւելի լաւ, զինուած է աւելի լաւ և նրա մատակարարութիւնն էլ աւելի լաւ է, քան անցեալ տարի. երբ նա ճանաչել է թշնամուն, նրա գործադրած ձևերը, նրա բնաւորութիւնը, նրա թոյլ կողմերը: Տէր Աստուած, որ գէթ չիմանանք թէ այդ հարուածը հասցրած է այն րոպէին, երբ մեր թշնամին, ինչպէս շատ անգամ կրկնում էր այս պատերազմի ընթացքում, ինքը պատրաստ էր ամեն զիջում անել, միայն թէ վերջ տայ քայքայող և կործանարար պատերազմին…

Իսկ պ. Սուվորինն իւր «Փոքրիկ նամակների» մէջ այնպիսի տրամադրութիւն է ցոյց տալիս, որ, ինչպէս ասում են՝ դանակ խփես, արիւն չի կաթի:

Վատ խաղաղութիւնը լաւ է, քան թէ բարի վէճը: Անշուշտ այսպէս պէտք է ասել և այսօր ցաւ ի սիրտ: Ուրախանալու բան չունինք ամենևին, փողոցները լուսավառելու և դրօշակներ կախելու ոչ մի հնարաւորութիւն չկայ, թէև ամեն մի հաշտութեան մէջ անտարակոյս այն լաւ կողմը կայ, որ մարդիկ կը դադարեն իրենց արիւնը թափել, իրար խեղդամահել և այն մասին միայն մտածել, որ աւելի շատ վնաս տան իրար:

Ս. Իւ. Վիտտէն որոշ հրահանգներ ունէր զիջումների մասին: Երբ այդ հրահանգները սպառուեցին, նա կանգ առաւ և նոր հրահանգներ ստացաւ Պետերբուրգից, որոնք և առաջ բերին հաշտութիւնը:

Մենք պարտութիւն կրեցինք պատերազմում: Մենք չկարողացանք տալ այն հարուածները, որ սովորաբար միշտ տալիս էինք, մեր բոլոր ոյժերը լարելով: Սա շատ տխրալի մի էջ է մեր պատմութեան մէջ և այդպէս էլ կը մնայ: Ճապոնացիները ստացան ամեն բան, ինչ որ պահանջում էին և, ի հարկէ, կը ստանան, զանազան սօուսների տակ, և այն միլիարդները, որոնք անհրաժեշտ էին նրան: Ես չգիտեմ, թէ ի՞նչ արժէ Սախալինի հարաւային մասը—20 կոպ., թէ՞ 2 միլիարդ, ի՞նչ արժէ Պորտ-Արթուրը և Դալնին, ի՞նչ արժէ Ռուսիայի զինուորական փառքը, նրա ազդեցութիւնը Եւրոպայի և Ասիայի գործերի վրայ: Ի՞նչ արժէ մեր շնորհիւ Ասիայում մեծ պետութիւն ստեղծելը: Ի՞նչ արժէ մեր ֆինանսների քայքայումը: Այս բոլոր կորուստները չի կարելի հաշուել: Դրանք նոյնպէս որ անհաշուելի են, ինչպէս որ անհաշուելի են Ճապոնիայի ստացած օգուտները: Տարօրինակ են թւում ինձ պաշտօնական «Պետ. Հեռ. Գործակալութեան» հեռագրի այդ խօսքերը. «Ճապոնացիներն ընդունեցին ռուսաց ուլտիմատումը» (վերջնագիրը): Ես կարծում եմ, որ ուլտիմատում խօսքն այստեղ բոլորովին անտեղի է: Պէտք էր գրել համեստօրէն՝ «ռուսաց պայմանները»: Եթէ նրանք ընդունել են այդ պայմանները և հրաժարուել են պատերազմական տուգանքից, պատճառը շատ պարզ է. Օյաման հեռագրել է Տոկիօ, թէ ինքը չի կարող երաշխաւորել յաղթութեան համար: Այս բանն ինձ յայտնի է լաւ աղբիւրից և ես կարծում եմ, որ մինչև անգամ առանց այս հեռագրի էլ ճապոնիան չէր կարող վստահ լինել յաղթութեան: Մենք Սեդան չունեցանք ցամաքի վրայ և երբեք էլ չէինք կարող ունենալ, եթէ շարունակէինք պատերազմը, բայց ծովի վրայ ունեցանք ամենակատարեալ Սեդան:

Ճապոնիան խոշորապէս զիջել է Մեծ ովկիանոսի նաւահանգիստներում ապաստանած նաւերի խնդիրներում, ինչ որ շատ էլ կարևոր չէ նրա համար, նմանապէս և ծայրագոյն Արևելքում ունենալիք մեր նաւատորմղի խնդրում, մի նաւատորմղի, որը, միևնոյն է, 20 տարուց առաջ չենք ունենալ: Իսկ մինչև այդ ժամանակ ճապոնիան կունենայ այնպիսի մի նաւատորմիղ, որի դէմ կռուել չենք կարող ոչ թէ միայն մենք, այլ և, գուցէ, Ամերիկան: Եւ մենք ստիպուած ենք մխիթարուել կրկնելով յայտնի ասացուածը. ամեն ինչ դէպի լաւն է գնում աշխարհներից ամենալաւ աշխարհում…

Հայերէն այդ ասացուածի աւելի սուր արտայայտութիւնը կայ. «Կսծու փառք Աստծու...»:

⁂

Բեռլինում այս օրերս լոյս է տեսել Ռուդոլֆ Մարտինի մի գիրքը «Ռուսիայի և Ճապոնիայի ապագան» վերնագրով: Ռուսիայի մասին խօսելով, հեղինակը, ինչպէս հաղորդում է «Пет. Вѣд.»-ին, այն կարծիքն է յայտնում, թէ՝

Ռուսաց քաղաքականութեան կործանումը Ծայրագոյն Արևելքում նշանաւոր չափով հանդիսանում է իբրև հետևանք Ռուսիայի և Գերմանիայի միջև եղած պայմանադրման. այդ պայմանադրումով է բացատրւում, ի միջի այլոց, և այն անպատրաստութիւնը, որ ցոյց տուեց Ռուսիան պատերազմի սկզբում: Այժմ ճապոնական ծովի յաղթութիւնն է թաղում Ռուսիայի այն երազը, որով նա ուզում էր [illegible] կատարել Ծայրագոյն Արևելքում և տիրել Կ. Պոլսին: Աւելի ևս կարևոր կարող են լինել ներքին անցքերի հետևանքները: Ռուսիայի ֆինանսական և տնտեսական պայմանն որոշւում է նրա երկրագործութեան վիճակով. մինչդեռ, նոյն իսկ չխօսելով այն մասին, որ սովորական տարիներում հողը Ռուսիայում, մշակման անկատարելութեան պատճառով, տալիս է մի երրորդականը միայն այն բերքի, ինչ որ տալիս է ուրիշ երկրներում,—այս տարի Ռուսիայում անբերրիութիւն է կանխատեսւում: Ռուսիայում երկրագործութիւնը ոտքի կանգնեցնելու համար, անհրաժեշտ է ահագին ծախքեր անել, և ամենից առաջ անհրաժեշտ է կրթութիւն ու եռանդ: Ռուսիայում հիմնական փոփոխութիւն կարող է կատարուել հարիւր տարուց յետոյ: Ինչպէս Ֆրանսիայում XVIII դարի վերջը, այնպէս և այժմ Ռուսիայում յեղափոխութիւնն անխուսափելի է

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

ՈՒՐՄԻ, 10 օգոստոսի.—Երբ գրիչ ես վերցնում մի օր և է թղթակցութիւն գրելու, կարիք ես զգում ամենից առաջ գրել այն ողբերգական դէպքերի ապրելութեան մասին, որ իբրև մի ճնշող կոշմար կախուած է վերջին ժամանակներում հայի գլխին:

Երևան-Նախիջևանի դէպքերի լուրն այստեղ հասնելիս տեղիս պարսիկ բնակչութեան մէջ ևս խլրտումներ տեղի ունեցան: Քրիստոնեաների վրայ նրանք վատ աչքով սկսեցին նայել և առիթներ էին փնտռում նոյն տեսակ դէպքերն այստեղ ևս առաջացնելու:

Սակայն արթուն էր շահզադէն, քաղաքիս դատաւոր՝ պրինց Իմամ-Ղուլի-Միրզան բարձր կառավարութիւնից հրաման էր ստացել պաշտպանել հայերին, և ոչ մի դէպքում աւելի լաւ կերպով չէր կարելի ի գործ դնել այդ հրամանը, քան այդ արաւ պրինցը:

Նա քրիստոնեաների թաղերում պահապան զինուորներ դրեց, իւր գաղտնի լրտեսների միջոցով տեղեկացաւ խռովարար մարդկանց մասին, որոնց ծածուկ ձերբակալելով՝ իւր սեփական առագաստանաւերով փոխադրեց Ուրմիոյ լճի միւս ափը, որտեղից կառավարութեան ձեռքերով նրանք տարուեցան Թաւրիզ հարկ եղած պատիժները կրելու: Իւր մօտ հրաւիրեց քաղաքի ազդեցիկ հոգևորականներին ու վաճառականներին և բացատրելով նրանց հայերի և կառավարութեան շահերի կապակցութիւնը, յորդորեց միջոցներ ձեռք առնել գրգռուած բնակչութեանը հանգստացնելու համար, սպառնալով, հակառակ դէպքում, նրանց պատասխանատուութեան ենթարկել:

Նրա ձեռք առած միջոցներն իրենց ցանկալի արդիւնքն ունեցան և կարգը պահպանուեցաւ: Եղան, սակայն, փոքրիկ անախորժութիւններ, որոնց առաջը շահզադէն առաւ առանց ժամանակ կորցնելու:

Այդպիսի դէպքերից մէկն էր Դարբուրաղ գիւղում մի հայի ծանր կերպով վիրաւորուելը մի թուրքից: Յանցաւորն անմիջապէս ձերբակալուելով քաղաք բերուեցաւ և, փառաւորապէս ծեծուելուց յետոյ, թէ դրամական տուգանքի ենթարկուեցաւ և թէ ականջը ծակուեցաւ: Այդ խիստ պատժի լուրը տարածուելով ամբոխի մէջ, ի հարկէ արգելք հանդիսացաւ մի կարգ խռովարարների գործունէութեան:

Վրայ հասաւ Թաւրիզի յունիս 1-ի դէպքը: Թուրք բնակչութիւնը կրկին յուզուեցաւ, բայց անմիջապէս վրայ հասաւ շահզադէի երկաթէ ձեռքը և դադարեց ամեն խլրտում:

Յուլիս 7-ին պարսիկ ամբոխը, զինուած փայտերով ու սուր զէնքերով, յարձակուեց հրէաների վրայ, թալանեց նրանց մանուֆակտուրի խանութները, վիրաւորեց 37 հոգի, որոնցից 2-ը մեռան, 15 հոգու ակռաները ջարդեց. բայց հազօրաւոր մարդկանց այդ կատաղի գրոհը զսպուեցաւ քառորդ ժամուայ ընթացքում միայն: Շահզադէն դէպքի մասին հեռախօսով լուր ստանալուն պէս հրամայեց լուր տալ քաղաքի դըրսում բանակած զինուորներին և ձիաւորներին, թւով 300 հոգի, անմիջապէս բազար հասնել. իսկ ինքը դուրս վազելով հեծաւ իւր դռանը կանգնած ձին, որ իրեն չէր պատկանում, և շտապեց բազար: Մինչև ձիաւորների և իրեն ընկերակցող ոստիկանների բազար մտնելը նա մենակ բազարի մէջ արշաւում էր այս ու այն կողմը և զսպում ամբոխին: Դէպքի սկսուելուց 10 րոպէ յետոյ պրինցը բազարումն էր, իսկ հինգ րոպէ դրանից յետոյ ամեն ինչ այնպէս խաղաղել էր, որ կարծես ոչինչ չէր պատահել:

Եթէ չլինէր չահզադէն, խռովութիւնը մեծ ծաւալ կըստանար, ամբոխը կըստուարանար, և մենք ականատես կըլինէինք Կովկասի դէպքերի նման գազանութիւնների:

Ահա թէ ինչ կարող է անել մի կառավարութիւն, որին ցանկալի է իւր հպատակների ապահովութիւնն ու հանգիստը...

Այստեղի հայ վաճառականները, ևբախտաբար չահզադէի արթուն հսկողութեանն ու պաշտպանութեանը, հեռագրով թէ Թէհրան և թէ Թաւրիզ յայտնեցին իրենց դէպի պրինցն ունեցած երախտագիտութեան շնորհակալութիւնը: Թաւրիզի կառավարութիւնը իւր շնորհակալութիւնը յայտնեց պրինցին վերջին դէպքերի զսպման առթիւ, իսկ հայերը թէ Թէհրանից և թէ Թաւրիզից արժանացան պատասխան—հեռագրերի, որոնց մէջ ասուած է, որ թէ պրինցի և թէ բարձր կառավարութեան պարտականութիւնն ու ցանկութիւնն է հայերի պաշտպանութիւնը, որ նրանք ընդ միշտ պիտի վայելեն:

Ճշմարտութիւնը պահանջում է աւելացնել և այն, որ տեղական Թուրք բնակչութեան հանգիստ մնալու գործում պակաս դեր չխաղացին նոյնպէս Երևանի հայերի Թուրքերին տուած դասը և տեղական հայերի զինուած ինքնապաշտպանութեան պատրաստ լինելը: Թուրքերի մէջ այդ լուրը տարածուած է չափազանցրած. Նրանք հաւատում են, որ բազմաթիւ հայ յեղափոխականներ ու ռումբեր կան մեզ մօտ: Սխալ կարծիք, որ յամենայն դէպս ծառայում է յօգուտ քրիստոնեաների ապահովութեան:

Ա. Նազարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ.—Ինչպէս միշտ, այս տարի ևս սուլթանն իւր գահակալութեան օրը շնորհաւորանքներ է ընդունել զանազան ազգերի տեղական հոգևոր պետերից, որոնց թւում նաև հայոց պատրիարքից: Պատասխանելով վերջինիս ուղերձին, սուլթանն ասել է, թէ մի քանի հայ չարագործների պատճառով ինքն անպակաս չի անել իւր շնորհները հայ ազգից: Զմիւռնիայում և այլ տեղերում դինամիտ գտնուելու բազմաթիւ դէպքերը բացատրւում են նրանով, որ այդ տեղերում հանքեր կան, որոնց համար դինամիտ է պահանջւում, բայց որովհետև դինամիտի ներմուծումն արգելուած է, այդ պատճառով արտասահմանից բերւում է վաղուց ի վեր գաղտնի կերպով: Ոստիկանութեան գտած դինամիտի մի մասն ըստ երևոյթին նշանակուած է եղել հանքերի, և ոչ թէ ոճրալի գործերի համար:

—Սուլթանի կեանքի դէմ եղած սպանութեան փորձի առթիւ Թուրք կառավարութիւնը պահանջել էր, որ Կ. Պոլսի օտարերկրեայ ներկայացուցիչները քննիչ յանձնաժողովի ձեռքը յանձնեն օտարերկրեայ պոստերով ստացուող այն նամակները, որոնք ուղղուած են սպանութեան փորձի մեղադրանքով ձերբակալուած 15 անձերին: Եւ օտարերկրեայ ներկայացուցիչներին չյաջողուեց խուսափել այդ պահանջը կատարելուց: Սակայն, որպէս զի նամակներն ի չարը չգործադրուեն, հիւպատոսները կանոն են սահմանել, որ օտարահպատակների անունով ստացուող նամակները օտարերկրեայ պոստատներից պէտք է անմիջապէս տանուեն հիւպատոսարան, որտեղ պիտի բացուեն Թուրք պաշտօնեայի ներկայութեամբ և պատճէնը հանուելուց յետոյ միայն պիտի յանձնուեն նրան:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՃԱՊՈՆԻԱ.—Օգոստոսի սկզբներին վերանորոգուած է անգլիաճապոնական դաշնակցութիւնը: Սակայն այս բանը գաղտնի էր պահւում Ճապոնիայի պահանջմամբ, որը չէր ուզում, որ Ռուսիան իմանար այդ՝ հաշտութեան բանակցութիւնները վերջանալուց առաջ, որպէս զի՝ այդ բանը սպառնալիք չնկատէր իւր դէմ: Սակայն, այս գաղտնապահութիւնը, «Ind. Belge»-ի ասելով, միտք չունէր. ամենքն էլ շատ լաւ գիտէին, որ անգլեաճապոնական դաշնակցութիւնը պիտի վերանորոգուի, որովհետև եթէ Անգլիայում վստահութեամբ էին վերաբերւում Ճապոնիային պատերազմից առաջ, ապա այդ վստահութիւնն աւելի ևս պիտի ամրանար նրա տարած մի շարք փառաւոր յաղթութիւններից յետոյ: Դաշնակցութեան նորոգումը հանդիսանում է իբրև լոգիկական հետևանք իրերի ներկայ դրութեան: Պնդում են, որ նոր դաշնագիրն աւելի մեծ հետևանքներ կունենայ, քան նախկինը:

ՌՈՒՍ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Համառօտ տեսութիւն սկզբից մինչև վերջը)

Այս պատերազմի մէջ կատարուեց ճիշտ այն, ինչ որ պատմում է մեզ սրբազան պատմութիւնը Դաւթի և Գողիաթի մենամարտի մասին: «Ասիական» մի փոքրիկ պետութիւն մարտի եկաւ «եւրոպական» մի հսկայ կայսրութեան դէմ և մի շարք ճարպիկ հարուածներով ապացուցեց աշխարհին, որ մի ազգ մեծ կարող է լինել ոչ թէ իւր թւով ու բռնած տարածութեամբ, այլ-ուսումով, գիտութեամբ և բուռն հայրենասիրութեամբ: Այս տեսակէտից էր գլխաւորապէս, որ ոչ մի պատերազմ այնքան հետաքրքրութիւն չէր շարժել, որքան ռուս-ճապոնական պատերազմը:

Այժմ, երբ այդ պատերազմը վերջացած է, մենք կարող ենք յետադարձ մի ակնարկ ձգել դրա սկզբնաւորութեան, ընթացքի և վախճանի վրայ, օգտուելով մեր տեսութեան համար մեծ մասով «Рус. Вѣд-»-ից, որի տուած տեղեկութիւնները ճանաչուած են իբրև անկողմնակալ և բարեխիղճ գրչի արդիւնք:

Պատերազմը տեղի ունէր միաժամանակ ծովի և ցամաքի վրայ: Մէկը միւսի հետ չխառնելու համար, մենք կըխօսենք նախ ծովային և ապա ցամաքային պատերազմի մասին առանձին-առանձին, իսկ վերջը հաշտութեան մասին:

I.

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԾՈՎԻ ՎՐԱՅ

Պատերազմը սկսուելուց առաջ ռուսաց ծովային ոյժերի գլխաւոր մասը Խաղաղական ովկիանոսում կեդրոնացած էր Պորտ-Արտուրում (13 զրահանաւ և յածանաւ), միւս մասը գտնւում էր Վլադիվաստոկում (4 յածանաւ) և մի փոքրիկ մասը — Չեմուլպոյում (2 մարտանաւ):

Յունուարի 26-ին, օրուայ ժամը $3^{1}/_{2}$-ին, ծովակալ Ուրիուն 6 խոշոր և 8 մանր մարտանաւերով մարտակոչ հրաւիրեց ռուսներին Չեմուլպոյում: Ռուսաց «Վարեագ» և «Կորէեց» նաւերը հետևեալ օրը, յունուարի 27-ին, դուրս եկան նաւահանգստից և քաջաբար կռուելուց ու խիստ վնասուելուց յետոյ խորտակուեցին իրենց իսկ նաւաստիների ձեռքով, որպէս զի չընկնեն ճապոնացիների ձեռքը: Կորէայի այդ նաւահանգիստն այսպիսով ռուսներից մաքրելուց յետոյ, ծովակալ Ուրիուն ափ հանեց 19,000 հոգուց բաղկացած մի զօրաբանակ գեներալ Կուրոկիի հրամանատարութեան տակ, որը սկիզբը պիտի դնէր ցամաքային պատերազմին Կորէայից:

Նոյն օրը (յունուարի 26-ին) ճապոնական գլխաւոր նաւատորմիղը (46 նաւ), ծովակալ Տոգոյի հրամանատարութեան տակ, մօտեցաւ Պորտ Արտուրին և գիշերուայ ժամը 11-ի մօտերքը ականային յարձակում գործեց ռուսաց նաւերի վրայ այն ժամանակ, երբ վերջիններս, բանից անտեղեակ, հանգիստ կանգնած էին արտաքին նաւակայանում: Այդ յարձակման հետևանքն այն եղաւ, որ «Ցեսարևիչ» և «Ռետվիզան» զրահանաւերը և «Պալլադա» յածանաւը, ծանր վնասներ ստանալով, երկար ժամանակով անպէտք դարձան կռուի համար: Յունուարի 27-ի առաւօտեան Տոգոն նոր յարձակում գործեց ռուսաց նաւերի վրայ և նորից անպէտքացրեց երկու ուրիշ զրահանաւ և երկու յածանաւ:

Այսպիսով ռուսները Պորտ-Արտուրում միանգամից զրկուեցին առ երկար ժամանակ իրենց նաւային ոյժերի գրեթէ կէսից, որով միւս նաւերը կամայ-ակամայ անգործութեան դատապարտուեցին, տիրապետութիւնը ծովի վրայ թողնելով ճապոնացիներին: Տոգոյի յետագայ գործն այն եղաւ, որ նա աշխատում էր ռուսաց մնացած նաւերը փակել նաւահանգստում, առևտրական հին նաւեր խորտակելով նաւահանգստի մուտքի մէջ:

Պատերազմը ռուսաց կողմից պաշտօնապէս յայտարարուեց յունուարի 28-ին: Եւ իսկապէս այդ օրից ռուսները սկսեցին պատերազմի պատրաստութիւններ տեսնել: Յունուարի 29-ին Դալնի քաղաքի մօտ խորտակուեց «Ենիսէյ» նաւը, որն ականներ էր դարսում ծովի մէջ մուտքը ճապոնացիների առաջ փակելու համար: Փետրուարի 1-ին նոյն տեղում խորտակուեց «Բոյարին» յածանաւը:

Այս բոլոր դժբաղդութիւնները հարկադրեցին Խաղաղական ովկիանոսի ռուսաց նաւատորմղի հրամանատար կարգելու Մակարովին, որը ռուս ծովակալների մէջ ամենաբանգէտն ու խիզախն էր համարւում: Մակարովը Պորտ-Արտուր հասաւ փետրուարի 23-ին և եռանդով ձեռնարկեց նաւատորմղի պակասութիւններն ուղղելու գործին: Կարճ միջոցում կարողացաւ գործն այնպիսի դրութեան մէջ դնել, որ մինչև այդ անգործութեան դատապարտուած ռուսաց նաւերը սկսեցին դուրս գալ նաւահանգստից խուզարկութիւններ կատարելու և նոյն իսկ Տոգոյի դէմ յարձակուելու համար: Տոգոն կրկնապատկեց իւր եռանդը և սկսեց խարուսիկ գործողութիւններով խրախուսել Մակարովի խիզախ ձեռնարկութիւնները նրան թակարդը ձգելու համար: Մարտի 31-ին նա հորիզոնում ցոյց տուեց մի քանի նաւ. Մակարովը, դէպքը յարմար համարելով, շտապեց դուրս գնալ ծովը ճապոնական այդ մի քանի նաւի վրայ յարձակուելու համար. սակայն, երբ նա արդէն բաց ծովումն էր, նրա առաջ յանկարծ բնուեց Տոգոյի ամբողջ նաւատորմիղը, և Մակարովը շտապեց յետ դառնալ առանց կռուի բռնուելու թշնամու գերազանց ոյժերի հետ: Յետ դառնալիս «Պետրոպավլովսկ» զրահանաւը, որի վրայ գտնւում էր ինքը Մակարովը, մեծ իշխան Կիրիլ Վլադիմիրովիչը և հռչակաւոր նկարիչ Վերեշչագինը, դիպաւ ստորջրեայ ականի, որ գիշերը բաց էին թողել ճապոնացիները, և երկու րոպէի ընթացքում խորտակուեց: Ազատուեց միայն մեծ իշխանը, իսկ Մակարովը, Վերեշչագինը և մօտ հազար նաւաստիներից մեծ մասը ջրահեղձ եղան: Նոյն միջոցին ականի դիպչելով անպէտքացաւ նաև «Պոբեդա» զրահանաւը: Մակարովի մահը միանգամայն խորտակեց ռուսների յոյսը:

Մակարովից յետոյ հրամանատարութիւնն անցաւ ծովակալ Վիտգեֆտին, որը թողնելով իւր նախորդի ներգործական տակտիկան, սկսեց հետևել կրաւորական պաշտպանութեան տակտիկայի լողացող ականների միջոցով: Այս տակտիկայի շնորհիւ և ուրիշ դժբաղդ պատահարներից ճապոնացիները կորցրին եօթ նաւ 27,125 տօնն տարողութեամբ:

Ապրիլի լոյս 20-ի գիշերը Տոգոյին աջողուեց փակել Պորտ-Արտուրի նաւահանգստի մուտքը բրանդերներով, որից յետոյ ճապոնացիները հնարաւորութիւն ունեցան, առանց ռուսաց նաւերի յարձակումից երկիւղ կրելու, պաշարողական մի զօրաբանակ ափ հանել Լեաօդունում: Ծովից արդէն պաշարուած լինելով՝ Պորտ-Արտուրը պաշարուեց ցամաքի կողմից ևս (մայիսի 1-ից): Վաղ թէ ուշ Պորտ-Արտուրը պիտի ընկնէր, ուստի ծովակալ Վիտգեֆտը վճռեց ազատել նաւատորմիղը փախչելով Վլադիվաստոկ: Այդ նպատակով նա յունիսի 10-ին դուրս եկաւ Պորտ-Արտուրից, բայց Տոգոն կտրեց նրա ճանապարհը և նա ստիպուած էր ետ դառնալ: Նոյն փորձը Վիտգեֆտը փորձեց յուլիսի 28-ին. այս անգամ գործը վերջացաւ մեծ աղէտով. Տոգոյի հետ բռնուած կռուի հէնց սկզբում Վէյ-Խայ-Վէյի մօտ սպանուեց ինքը Վիտգեֆտը և նրա նաւատորմիղը սոսկալի ջարդ կրեց: Ծովակալ Ուխտոմսկին, որը այդ կռւում յաջորդեց Վիտգեֆտին, ստիպուած եղաւ խիստ վնասուած հինգ զրահանաւով, մի յածանաւով և երեք ականակիր նաւով վերադառնալ Պորտ Արտուր: Մնացած նաւերը, նոյնպէս խիստ վնասուած, ցան ու ցիր եղան. դրանցից «Ցեսարևիչ» զրահանաւը և երեք ականակիր նաւ ապաստան գտան և զինաթափ եղան Բիաօչաօյում, «Ասկոլդ» յածանաւը և մի ականանաւ—Շանհայում և «Դիանա» յածանաւը—Սայգոնում. մի ականանաւ խորտակուեց, իսկ «Նովիկ» յածանաւը, ճապոնացիներից հալածական եղած, խորտակուեց Սախալինի մօտ: Օգոստոսի 11-ին ծովակալ Ուխտոմսկին երրորդ անգամ փորձեց փախչել Վլադիվաստոկ, բայց նրա նաւերից «Սևաստոպոլը» դիպաւ լողացող ականի և այս դէպքը հարկադրեց նրան վերադառնալ նաւահանգիստ:

Սրանից յետոյ ռուսները թողին իրենց նաւատորմիղը փրկելու յոյսը, նաւերից հանեցին բոլոր թնդանօթները և դրին Պորտ-Արտուրի մարտկոցների վրայ, իսկ նաւաստիները մտան ցամաքային զօրքերի շարքը: Յետագայում (նոյեմբերին) այդ զինաթափ եղած նաւերը գրեթէ բոլորը խորտակուեցին նաւահանգստի մէջ ճապոնական ցամաքային պաշարողական թնդանօթների ռումբերից, որ թշնամին արձակում էր Պորտ-Արտուրի վրայ տիրող բարձունքներից: Դեկտեմբերի 4-ին ճապոնական ականակիր նաւերը պայթեցրին «Սևաստոպոլ» նաւը արտաքին նաւահանգստի մէջ և դրանով Խաղաղական ովկիանոսի ռուսաց նաւատորմիղը վերջնականապէս ոչնչացաւ:

Նշանակելին այն է, որ Վլադիվաստոկի փոքրիկ նաւախումբը աւելի մեծ անհանգստութիւն էր պատճառում ճապոնացիներին, քան թէ Պորտ-Արտուրի հզօր նաւատորմիղը: Վլադիվաստոկի չորս նաւերը դուրս էին գալիս արշաւանքներ գործելու Ճապոնիայի և Կորէայի ափերում և այդ արշաւանքների ժամանակ նրանց աջողուեց խորտակել ճապոնական 4 նաւ, որոնք զօրքեր և ռազմամթերք էին տանում պատերազմի վայրը, նոյնպէս և 6 առևտրական նաւ, որոնցով մաքսանենգ ապրանք էր փոխադրւում: Ծովակալ Կամիմուրան չորս անգամ փորձեց բռնել ռուսաց այդ նաւերը, բայց ամեն անգամ էլ անաջողութեան հանդիպեց: Օգոստոսի 1-ին Վլադիվաստոկի նաւախումբը ծովակալ Եսէնի հրամանատարութեամբ նորից դուրս եկաւ այս անգամ միանալու ծովակալ Վիտգեֆտի նաւախմբի հետ, որը յուլիսի 28-ին դուրս էր եկել Պորտ-Արտուրից Վլադիվաստոկ փախչելու համար: Ծովակալ Կամիմուրան այս անգամ վրայ հասաւ ռուսաց երեք յածանաւերին և Ֆուզանի մօտ վճռական ջարդ տուեց ծովակալ Եսէնին. «Ռիւրիկ» նաւը խորտակուեց, իսկ «Ռոսսիա» և «Գրոմոբոյ» նաւերը ծանր վնասներ կրելով վերադարձան Վլադիվաստոկ: Դրանից առաջ, մայիսի 2-ին, «Բոգատըր» նաւը դիպել էր ժայռի և անպէտքացել: Այսպիսով Վլադիվաստոկի նաւախումբն ևս իսկապէս դադարեց գոյութիւն ունենալուց:

Ապրիլին, ծովակալ Մակարովի մահացման թարմ տպաւորութեան տակ, ռուսաց ծովային իշխանութիւնը վճռեց Բալտիկեան ծովից զօրեղ նաւատորմիղ ուղարկել Պորտ Արտուրն ազատելու համար: Նաւատորմիղը, բաղկացած 32 մարտանաւից, ճանապարհուեց Լիբաւայից հոկտեմբերի 1-ին ծովակալ Ռոժեստվենսկու ընդհանուր հրամանատարութեան տակ: Նաւատորմիղը գնում էր բաժանուած երեք խմբի, մէկը իրեն Ռոժեստվենսկու ղեկավարութեամբ, միւսը ծովակալ Ֆալկերզամի և երրորդը ծովակալ Նեբոգատովի: Այդ խմբերը միացան ճանապարհին և ամբողջ նաւատորմիղը հազիւ եօթն ամսից յետոյ հասաւ ճապոնական ջրերը: Դեկտեմբերի 20-ին, երբ նաւատորմիղը դեռ ևս ճանապարհին էր, Պորտ Արտուրն ընկաւ, որով ոչնչացաւ Ռոժեստվենսկու արշաւանքի անմիջական նպատակը. այժմ մնում էր նրան կամ վերադառնալ հայրենիք կամ գնալ Վլադիվաստոկ: Վճռուեց վերջինս: Տոգոն հարկաւ հսկում էր ռուսներին: Մայիսի 14-ին թշնամիները հանդիպեցին իրար Ցուսիմա կղզու մօտ, և այստեղ Ռոժեստվենսկու հսկայական նաւատորմիղն այնպիսի մի ջարդ կրեց, որի նմանը չըկայ ծովային կռիւների պատմութեան մէջ. Ռոժեստվենսկին վիրաւորուեց կռուի հէնց սկզբում և գերի ընկաւ իւր շտաբով, Ֆալկերզամը սպանուեց, իսկ Նեբոգատովն անձնատուր եղաւ իւր չորս նաւով («Աւեօլ», «Կայսր Նիկոլայ I», «Ապրակսին» և Սենեաւին»): Մնացած նաւերի մեծ մասը խորտակուեց, մի երկու նաւի աջողուեց հասնել Վլադիվաստոկ և մի քանիսն էլ փախչելով ապաստանեցին Մանիլայում: Տոգոն այս կռուի մէջ կորցրեց մի քանի ականակիր նաւ միայն:

II.

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՑԱՄԱՔԻ ՎՐԱՅ

Պատերազմն սկսելով, Ճապոնիան երեք մասնաւոր նպատակ ունէր. 1) գրաւել Կորէան, 2) տիրել Պորտ-Արտուրին և Կվանտունին և 3) դուրս մղել ռուսներին Մանջուրիայից: Յունուարի 26-ին սկսուեց ճապոնական առաջին զօրաբանակի (65,000 հոգի) ափ հանումը Չեմուլպոյում և Հենզանում գեն. Կուրոկիի հրամանատարութեան տակ, իսկ փետրուարի 3-ին Պորտ Արտուրից դէպի Կորէայի սահմանն ուղարկուեց գեն. Կաշտալինսկու զօրքը (15,000 հոգի) Կորէան Մանջուրիայից բաժանող Եալու գետը պաշտպանելու համար. միևնոյն ժամանակ Կորէա ուղարկուեց Միշչենկոյի հեծելազօրը (2,200 հոգի) խուզարկութիւն կատարելու և ճապոնացիների յառաջացումը խանգարելու համար: Փետրուարի 16-ին գեն. Միշչենկոյի կազակներն առաջին ընդհարումն ունեցան ճապոնացիների հետ Պին-եանի մօտ, և սկսուեց Կուրոկիի յառաջացումը դէպի Եալու: Սակայն ձմեռը և ճանապարհների վատութիւնը թոյլ չըտուին նրան առաջ շարժուելու արագօրէն: Այս բանից օգուտ քաղեց ռուսաց զօրքերի գլխաւոր հրամանատար գեն. Կուրոպատկինը և օգնական զօրք ուղարկեց Եալու գետը, որով այդտեղ կազմուեց մի առանձին արևելեան զօրաբանակ (30,000 հոգի) գեն. Զասուլիչի հրամանատարութեան տակ: Կորէայում իւր կազակներով գործող գեն. Միշչենկոն առաջ շարժուեց. մարտի 15-ին Չոնջուի մօտ նա նոր ընդհարում ունեցաւ Կուրոկիի յառաջապահ զօրքերի հետ և պարտութիւն կրելով ստիպուեց հեռանալ Կորէայից: Կուրոկին արագօրէն առաջ շարժուեց և մարտի 23-ին գրաւեց Ը-ջուն ու Եալուի կորէական ամբողջ ափը, որով Կորէան ընկաւ ճապոնացիների ձեռքը: Ապրիլին գնդապետ Մադրիտովի պարտիզանական զօրքը (1000 հոգի) մի աջող արշաւանք գործեց դէպի հիւսիս արևմտեան Կորէա, բայց ապրիլի 27-ին ջարդ կրեց Անջուի մօտ և մեծ կորուստներ ունենալով յետ դարձաւ: Մայիսին Պոսիէտից դէպի հիւսիս արևմտեան Կորէա գնաց ռուսական մի զօրախումբ, որը հասաւ գրեթէ մինչև Հենզան և գրաւեց Կորէայի ծովափի Տումէն գետից մինչև Պալլադա ծովածոցը: Այդ զօրախմբին պիտի հետևէր գեն. Լինևիչը հարիւր հազար զօրքով Հենզանն ու Սէուլը (Կորէայի մայրաքաղաքը) տիրելու և թևից յարձակուելու Կուրոկիի վրայ: Սակայն այդ միջոցին Մանջուրիայում գործերն այնպիսի ընթացք ստացան, որ ռուսները ստիպուած եղան փոխել այդ ծրագիրը և հրաժարուել դէպի Սէուլ կատարելիք արշաւանքից. զօրքերը, որոնք արդէն գնում էին Վլադիվաստոկ, ճանապարհից յետ դարձուեցին և ուղղուեցին դէպի Մուկդէն գեն. Կուրոպատկինին օգնելու համար: Գործողութիւնները հիւսիս-արևմտեան Կորէայում սահմանափակւում էին յառաջապահ զօրքերի փոքրիկ ընդհարումներով և Կորէան (բացի ծովափնեայ շերտից սկսած Տումէն գետից մինչև Պալլադա ծովածոցը) մնաց ճապոնացիների ձեռքում: Ճապոնացիները գրաւեցին Կորէան գեն. Հասեգաւայի 20,000 զօրքով և, ի միջի այլոց, երկաթուղու գծեր անցկացրին Ֆուզանից մինչև Սէուլ և Ը-ջու և Հենզանից մինչև Պին-եան:

Ապրիլի սկզբներին գեն. Կուրոպատկինը բաւական օգնական զօրքեր ստացաւ և ապրիլի 17-ին Լեաօեանից գրաֆ Կելլերին զօրքով ուղարկեց Եալու գետը, որ գեն. Զասուլիչի հետ միասին յարձակուի Կուրոկիի վրայ: Բայց Կուրոկին կանխեց Կելլերին և ապրիլի 18-ին, անպատասխանի կերպով անցնելով Եալու գետը, յաղթութիւն տարաւ Տիւրենչենի մօտ, որտեղ ռուսները կորցրին 2,397 մարդ և 30 թնդանօթ: Տիւրենչենի ճակատամարտը ռազմական ահագին հետևանքներ ունեցաւ ճապոնացիների համար. Գեն. Կուրոպատկինը վճռեց նահանջ տալ դէպի հիւսիս, սպասելով, որ Կուրոկին արագօրէն պիտի շարժուի դէպի Լեաօեան: Ապրիլի 23-ին Կուրոկին առանց կռուի գրաւեց Ֆընհուանչէնը, և ամբողջ երկիրը Եալու գետից սկսած մինչև Ֆէնշուլինի լեռնաշղթան ճապոնացիների ձեռքն անցաւ:

Ճապոնական երկրորդ զօրաբանակը (85,000 հոգի) գեն. Օկուի հրամանատարութեամբ ապրիլի 22-ից անարգել ափ ելաւ Լեաօդուն թերակղզում և մայիսի 1-ին, յետ շպրտելով Կվանտունի ռուսաց զօրքը Ցանշիլիպուի մօտ, կտրեց Պորտ-Արտուրը գեն. Կուրոպատկինի հետ հաղորդակցութիւն ունենալուց: Դիմելով դէպի հարաւ, Օկուն մայիսի 13-ին հանդիպեց գեն. Ֆոկի զօրքին, որը պաշտպանում էր Ցինջոուի մօտ ամրացած դիրքերը: Օկուն տիրեց այդ դիրքերին, խլելով բերդային 82 թնդանօթ, ստիպեց գեն. Ֆոկին յետ քաշուել դէպի Պորտ-Արտուր և մայիսի 19-ին գրաւեց Դալնի քաղաքը: Նոյն ժամանակից էլ սկսուեց Պորտ-Արտուրի պաշարումը:

Ֆընհուանչէնը գրաւելուց յետոյ Կուրոկին չըգնաց Լեաօեանի վրայ, այլ սպասում էր մարշալ Նոձուի երրորդ զօրաբանակին (60,000 հոգի), որն սկսել էր ափ ելնել մայիսի 6-ին: Օգուտ քաղելով ճապոնացիների այս դանդաղումից, Կուրոպատկինը գեն. Շտակելբերգին ուղարկեց Պորտ-Արտուրն ազատելու: Սակայն գեն. Օկուն երկու օրուայ կռուի մէջ (յունիսի 1-ին և 2-ին) Վաֆանհոուի մօտ ջարդ տուեց Շտակելբերգին, որը, կորցնելով 5,621 հոգի և 17 թնդանօթ, արագօրէն նահանջ տուեց դէպի հիւսիս: Կուրոպատկինը գեն. Զարուբաևին ուղարկեց գեն. Շտակելբերգին օգնելու, բայց արդէն ուշ էր. մարշալ Նոձուի երրորդ զօրաբանակը մօտեցել էր Սիւենչանի լեռնային ճանապարհին հարաւում, իսկ հիւսիսում Կուրոկիի զօրաբանակը առաջ էր շարժուել դէպի Ֆէնշուլինի լեռնային կիրճերը և դէպի Թաշիխէ գետը: Վեց օրուայ կռուից յետոյ (յունիսի 9—14), յաղթելով լեռնային ճանապարհները պաշտպանող գրաֆ Կելլերին, գեն. Ալէքսէևին և գեն. Միշչենկոյին, Նոձուն և Կուրոկին տիրեցին Ֆէնշուլինի և Սիւենչանի բարձունքներին: Գրաւելով Դալինի լեռնային ճանապարհը Նոձուն քիչ մնաց կտրէր Շտակելբերգի զօրքը գլխաւոր բանակից, իսկ նրան օգնելու համար գնացող գեն. Զարուբաևը ստիպուած եղաւ արշաւանքը դադարեցնել և նահանջ տալ դէպի հիւսիս: Լեռնային ճանապարհները գրաւելուց յետոյ, ճապոնական բանակները երկու շաբաթուայ հանգստութիւնից յետոյ սկսեցին իջնել լեռներից դէպի հարթավայրերը: Յունիսի 24-ից մինչև 26-ը Օկուի բանակը իջաւ լեռներից և գրաւեց Հայ-ջոուն: Մինչ այդ՝ գեն. Կուրոպատկինը, թարմ զօրքեր ստանալով, վճռեց յառաջանալ. սա չորրորդ անգամն էր, որ ռուսաց գլխաւոր հրամանատարը վճռում էր պաշտպանողական դիրքից անցնել յարձակողականի: Այս նպատակով գրաֆ Կելլերի զօրաժինը յունիսի 21-ին առաջ շարժուեց խուզարկելու Կուրոկիի բանակի դիրքերը Լեանդեանսեանի մօտ և յուլիսի 4-ին մեծ ոյժերով փորձեց Կուրոկիին յետ քշել լեռնային ճանապարհներից, բայց անաջողութիւն կրեց Լանխէ գետի վրայ, կորցնելով 1,212 հոգի: Կուրոկին իւր կողմից յառաջ խաղաց և Սիխէեանի մօտ (յուլիսի 5—6 ին) յետ քշեց գեն. Գերշելմանի զօրաժինը, որը կորցրեց մօտ 350 մարդ և մի քանի թնդանօթ: Այսպիսով վերջացաւ Կուրոպատկինի չորրորդ յառաջացումը: Այնուհետև Դաշիչաօյի մօտ ունեցած երկու օրուայ կռուից յետոյ (յուլիսի 10—11-ին), գեն. Օկուն գրաւեց Ինկոու կարևոր նաւահանգիստը, ռուս զօրքը կտրելով ծովից:

Յուլիսի կէսին ճապոնական բոլոր երեք զօրաբանակները մարշալ Օյամայի ընդհանուր հրամանատարութեան տակ սկսեցին յառաջ խաղալ դէպի Լեաօեան: Յուլիսի 18-ին գեն. Կուրոկին յետ քշեց գր. Կելլերին, իսկ 19-ին — գեն. Գերշելմանին, առաջինին Թեաուանի, իսկ երկրորդին Հուէձեաձիի մօտ, որի ժամանակ ռուսները կորցրին 2,100 մարդ և հինգ թնդանօթ, իսկ գր. Կելլերը սպանուեց: Յուլիսի 18-ին Սիմուչէնի մօտ մարշալ Նոձուն ճակատամարտ ունեցաւ գեն. Զասուլիչի հետ, որը կորցրեց 1,900 հոգի և վեց թնդանօթ, իսկ մարշալ Օկուն առանց կռուի գրաւեց Հայչէնը, և ճապոնական երեք զօրաբանակները միացան:

Օգոստոսի սկզբին ռուսաց զօրքերի թիւը Մանջուրիայում հասաւ 210,000 ի: Գեն. Կուրոպատկինն այդ թիւը բաւական համարեց յարձակուելու (հինգերորդ անգամ) ճապոնական միացեալ բանակների վրայ, որոնց ընդհանուր թիւը 240,000 էր: Լեաօեանի մօտ տեղի ունեցած տասն օրուայ կատաղի կռուից յետոյ, Կուրոպատկինը ստիպուեց ձգել խիստ ամրացրած Լեաօեանը և նահանջ տալ դէպի Մուկդէն, կորցնելով մօտ 20,000 հոգի և 21 թնդանօթ: Սակայն ճապոնական զօրաբանակն ևս Լեաօեանի մօտ ծանր կորուստներ ունեցաւ և այնքան թուլացաւ, որ չկարողացաւ օգուտ քաղել իւր աջողութիւնից և առաջ շարժուել դէպի Մուկդէն: Մուկդէնի մօտ մի ամիս հանգստանալուց և իւր զօրքերի թիւը 300,000 ի հասցնելուց յետոյ Կուրոպատկինը վեցերորդ անգամ, սեպտեմբերի 22 ին, առաջ շարժուեց Պորտ-Արտուրն ազատելու համար: Շախէի և Թայձիխէ գետերի վրայ ունեցած հինգ օրուայ կռուի մէջ (սեպտ. 26—30-ին) ռուսաց զօրաբանակը սակայն ահագին կորուստներ ունեցաւ և ստիպուեց նահանջ տալ, կորցնելով 44 թնդանօթ: Օյաման իւր կողմից բոլոր ոյժերով առաջ նետուեց ռուսներին Խոնխէ գետի այն կողմը շպրտելու համար, բայց Շախէ գետի վրայ տեղի ունեցած հինգ օրուայ ճակատամարտի մէջ Կուրոպատկինը կարողացաւ ամուր մնալ իւր գրաւած դիրքերում, չնայելով որ կորցրեց մօտ 40,000 մարդ, և նոյն իսկ գեն. Պուտիլովը ռուսաց առաջին յաղթանակը տարաւ մի լեռնաբլրի վրայ, որը նրա անունով կոչուեց «Պուտիլովեան լեռնաբլուր»: Այս արիւնահեղ ճակատամարտից միանգամայն ուժասպառ եղած, ռուս և ճապոնական բանակները պինդ ամրացան իրենց դիրքերի վրայ և հինգ ամիս չափ անշարժ կանգնած էին իրար դէմ առ դէմ, օրը օրին նոր ոյժեր հաւաքելով, որպէսզի մի նոր հսկայական ճակատամարտ տան իրար այս անգամ Մուկդէնի մօտ:

Մինչ այդ, Կվանտունում վճռւեց Պորտ-Արտուրի վիճակը: Գեն. Նոգին, առնելով Օկուի զօրաբանակի մի մասը և յետագայում այդ մասը հասցնելով 100,000 հոգու, յունիսի 10-ին Դալնիից դիմեց դէպի Արտուր և գեն. Ստեսսէլի զօրաժնի հետ կատաղի կռիւ մղելուց յետոյ յետ շպրտելով նրան, պաշարեց բերդը: Պաշարումը տևեց 56 օր: Այդ պաշարման ժամանակ Նոգին մի քանի անգամ փորձեց յարձակումներով առնել բերդը, բայց ամեն անգամ էլ պարտութիւն կրեց և ահագին կորուստներ ունեցաւ: Այն ժամանակ ճապոնացիները վճռեցին թողնել յարձակումները և բերդն առնել կանոնաւոր պաշարումով: Այս բանում նրանց մեծապէս օգնեցին 11-դիւյմանոց թնդանօթները, որոնցով նրանք 203 մետր բարձրութիւնից ռմբակոծում էին քաղաքը և նաւահանգիստը: Դեկտեմբերի 20-ին Արտուրի բերդապահ զօրքը, սովից և հիւանդութիւններից ուժասպառ եղած, անձնատուր եղաւ:

Այսպիսով 1904 թուականը վերջացաւ ռուսների համար ըստ ամենայնի անաջող և 1905 թուականն ևս ոչ մի աջողութիւն չբերեց նրանց:

Պորտ-Արտուրը գրաւելուց յետոյ գեն. Նոգիի բանակը շարժուեց դէպի հիւսիս և միացաւ գեն. Կուրոպատկինի դէմ Մուկդէնի մօտ Շախէի վրայ կեդրոնացած մարշալ Օյամայի բանակին, տանելով իւր հետ 11-դիւյմանոց թնդանօթները: Փետրուարի 15-ին մարշալ Օյաման իւր բոլոր ոյժերով առաջ շարժուեց, և տասն օր Մուկդէնի մօտ տեղի ունեցաւ սարսափելի մի ջարդ: Այստեղ կատարուեց նոյնը, ինչ որ Լեաօեանի մօտ: Գեն. Կուրոպատկինը յետ էր մղում ճապոնացիների կատաղի յարձակումները և աշխատում էր պահել իւր դիրքերը, որոնց խիստ ամրացրել էր, բայց վերջ ի վերջոյ ստիպուեցաւ տեղի տալ, և ճապոնացիները փետրուարի 25-ին մտան Մուկդէն: Այս անգամ ռուսների նահանջ տալն այնքան անկարգ էր, որ ճապոնացիները քիչ մնաց շրջապատէին Կուրոպատկինի ամբողջ բանակը: Ռուսները Մուկդէնի մօտ կորցրին մօտ 150,000 մարդ և 60 թնդանօթ: Կուրոպատկինը նահանջ տուեց դէպի Տելին և, այդտեղի ամուր դիրքերի վրայ ևս չկարողանալով դիմանալ, շարունակեց նահանջը դէպի աւելի հիւսիս, դէպի Խարբին:

Մուկդէնի մօտ կրած պարտութիւնից յետոյ գեն. Կուրոպատկինը հեռացուեց գլխաւոր հրամանատարի պաշտօնից, և այդ պաշտօնը յանձնուեց գեն. Լինևիչին: Լինևիչի գործն այն եղաւ, որ կարգի ձգի Մուկդէնի մօտ ջարդ ու փշուր եղած բանակը և նոր զօրքեր հաւաքի Խարբինը պաշտպանելու համար: Սակայն Լինևիչին չըվիճակուեց ցոյց տալու, թէ ինչ ընդունակութիւնների տէր զօրավար էր ինքը իբրև գլխաւոր հրամանատար, որովհետև Մանջուրիայում պատերազմը վերջացաւ Մուկդէնի ճակատամարտով:

Ցուսիմայի ջարդից յետոյ ռուսները զրկուելով իրենց ծովային վերջին ոյժերից, այլ ևս հնարաւորութիւն չունէին պաշտպանելու Սախալին կղզին, որը գրաւելու համար ճապոնացիներին մեծ ջանք չէր հարկաւոր: Յունիսի 25-ին ճապոնացիները զօրք հանեցին ափ և գրաւեցին կղզու գլխաւոր քաղաքը—Ալէքսանդրովսկը: Սախալինի ռուսաց փոքրաթիւ զօրքը մասամբ ջարդուեց, մասամբ գերի ընկաւ և մասամբ յետ քաշուեց դէպի կղզու հիւսիսային մասը, որով կղզին իրապէս ընկաւ ճապոնացիների ձեռքը:

Պատերազմի սկզբից մինչև վերջը ռուսները կորցրին մօտ 400,000 մարդ և 800 թնդանօթ, ճապոնացիները—մօտ 200,000 մարդ և 14 թնդանօթ.

III.

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամեն անգամ, երբ ռուսները պարտութիւն էին կրում, խօսք էր ընկնում հաշտութեան մասին. սակայն ոչ Լեաօեանից, ոչ Պորտ-Արտուրից և ոչ Մուկդէնից յետոյ ռուսները պարտուած չէին համարում իրենց և վճռապէս յայտարարում էին, թէ իրենց կողմից կըմերժուի հաշտութեան օգտին լինելիք ամեն միջնորդութիւն: Ցուսիմայի ջարդից յետոյ միայն, երբ ռուսները կորցրին ծովի վրայ տիրապետելու վերջին յոյսը, նրանք հարկադրուած եղան ընդունելու Միացեալ Նահանգների նախագահ Ռուզվելտի բարեկամական միջնորդութիւնը և յունիսին լիազօրներ ուղարկեցին Պորտսմուտ ճապոնական լիազօրների հետ բանակցելու համար: Բանակցութիւնները տևեցին մօտ մի ամիս: Այժմ ամենքի ուշադրութիւնը լարուած էր դէպի Պորտսմուտ, որտեղից հեռագրերն օր օրի վրայ լուրեր էին բերում, թէ ճապոնացիների արած չափազանց պահանջների պատճառով ռուսներն անհնարին են համարում հաշտուել, ուստի շատ հաւանական էր համարւում, որ բանակցութիւնները դադարեն, որով պատերազմը պիտի շարունակուէր, նոր աղէտներ բերելով երկու ազգութիւններին: Սակայն, վերջին րոպէին ճապոնացիները մեծահոգի և զիջող հանդիսացան իրենց պահանջների մէջ այն աստիճան, որ ոչ ոք չէր սպասում: Սկզբում նրանք պահանջում էին 1) պատերազմական ծախքերի հատուցումն, 2) Սախալին կղզին (որ իրապէս արդէն գրաւել էին), 3) այն նաւերը, որոնք ջարդից ազատուելով ապաստան էին գտել չէզոք նաւահանգիստներում և 4) ռուսական ծովային ոյժերի սահմանափակումը Հեռաւոր Արևելքում: Յետագայում ճապոնացիները ոչ թէ միայն հրաժարուեցին այդ բոլոր պահանջներից, այլ և վերադարձնում են Ռուսիային Սախալինի հիւսիսային մասը, հարաւայինը թողնելով իրենց ձեռքին, և պարտաւորւում են չամրացնել Լապերուզի նեղուցը: Ռուսիան պարտաւորւում է հատուցանել այն ծախքերը միայն (մօտ 100 միլիոն ռուբլի), որ արել է Ճապոնիան ռուս գերիների պահպանման համար. Պայմանագիրը ստորագրուած է օգոստոսի 23-ին: N.

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆՑԻ
ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ
և
ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ
տարրական դասընթաց
Առաջին մաս
Ստորին դասարանների համար.
Գինն է 20 կոպ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցներին: Պահեստը հեղինակի մօտ. Հասցէն
Эчміадзинъ, Гарегинъ Левонянцъ.
Въ Академіи. 10—1.

2000-4000 ՌՈՒԲԼԻ կողմնակի եկամուտ կարող է ունենալ ամեն որ, ով ձեռք կըբերի վճարելով 300—600 ր. (թոյլ է տրւում մաս մաս վճարում) մի մեքենայ հայլի, պատրաստելու համար անուշ համ ունեցող մի բերք, որ ամեն օր գործ է ածւում ամեն տեղ մեծ քանակութեամբ: Այս գործը հաճելի է, թեթև, խիստ մատչելի և ահագին օգուտներ տուող: Մանրամասնութիւններն ուղարկւում են պատասխան 7 կոպ. մարկով: Դիմել՝ Фабрика машинъ Инпо и К°, Варшава, Грибная ул., собственный домъ № 15. 25—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՅԱՐԳԵԼԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ
Բացել եմ Մազանդարանի Բարֆրուշ քաղաքում յանձնարարական տուն: Ընդունում եմ գոհացուցիչ պայմաններով—
I. Կապուած ապրանքներ ստանալ՝ տեղափոխելու:
II. Փոխադրութիւններ անել (բարաթլրագութիւն):
III. Գնել արտահանուող տեղական ապրանքներ (որոնք են բրինձ, բամբակ, բօժօժ, բուրդ, քունջիթ, բամբակի սերմ, մեղրամոմ, եղջիւր, կանէփ, մազեղէն կաշիներ, չամիչ-ծիրան, քուրակոյ, մուլաքաբաժ և այլն:
IV. Ծախելու՝ ներմուծուող ապրանքներ, որոնք են չերամի սերմ, շաքար, պեսոկ, թէյ, նաւթ, երկաթեղէն, մանիֆակտուր, չիթեղէն:
Մանրամասնութիւն և պայմաններ տեղեկանալ նամակով. Հասցէս հետևեալն է—Черезъ Красноводскъ, Мешедсеръ, Персія, Барфрушъ, Димитрій К. Бжишкьянцъ. 0—1

Дозв. ценз. Тифлисъ, 27 августа 1905 г. Տպարան Ար. Քութաթելաձէի Типог. Ар. Кутателадзе, Ник. ул. № 21.